



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

---

---

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԼՂՀ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

5

Մարտ  
2008

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որոշ դիտարկումներ ընտրական և հետընտրական գործընթացի վերաբերյալ .....	3
Армянская блогосфера и президентские выборы .....	6
ԼՂՀ ԱԳ նախարար Գ.Պետրոսյանի հարցազրույցը «Նորավանք» հիմնադրամի աշխատակից Սարգիս Հարությունյանին .....	8
Интервью с Сергеем Минасяном .....	10
Интервью с Игорем Мурадяном .....	11
Հարցազրույց ԱՄՆ Ֆլորիդայի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխդեկան Ասպետ Քոչիկյանի հետ .....	13
Косово как инструмент глобального воздействия .....	15
Право на независимость. юридический ликбез .....	17
Նոր զարգացումներ Իրանի միջուկային ծրագրի շուրջ .....	26
Ամերիկա-իրանական բանակցությունների շուրջ .....	29
Իսլամական կոնֆերանսը՝ արդիականացման ճանապարհին .....	32
Թուրքական ռազմական գործողությունը հյուսիսային Իրաքում .....	35
5 лет войны в Ираке. коллекция фактов .....	43

## ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագահական ընտրությունների հետ կապված հայտնի զարգացումներն այսօր վերլուծվում են հանրության ամենատարբեր հատվածներում և մակարդակներում: Այդ համատեքստում ավելորդ չեն, թերևս, նաև ներկայացված հետևյալ դիտարկումները:

### «Մասնակի հեղափոխություն»

Ըստ մեզ, ընտրական և հետընտրական գործընթացները ՀՀ-ում առաջին հերթին կարիք ունեն հստակ սահմանումների, որոնք առաժմ հստակ չեն հնչել ոչ հայկական տեղեկատվական դաշտում (ինչն այդ ոլորտի բազմաթիվ թերացումներից մեկն է ընդամենը), ոչ էլ պաշտոնական ելույթներում (թերևս, հասկանալի պատճառներով): Որոշ վերլուծաբաններ, հենվելով սերբական, վրացական, ուկրաինական, դրղրզական և այլոց փորձի վրա, Լ. Տեր-Պետրոսյանի ընտրարշավը և հետագա զարգացումները ներկայացնում են որպես դասական «գունավոր հեղափոխության» (ԳՀ) սցենար, և նման պնդման հետ դժվար է չհամաձայնվել: Հայտնի է նաև, որ ներկայիս ԳՀ-ների հենքում դրված է օտար միջամտությունը. դրանց հիմնական հեղինակներն անգլո-ամերիկյան ծառայություններն են, որոնց երբեմն աջակցում են նաև եվրոպական որոշ երկրների (Մերբիայում՝ գերմանական, Ուկրաինայում՝ լեհական) համապատասխան կառույցները: ՀՀ-ի պարագայում կան անուղղակի վկայություններն այն բանի, որ կատարվածը գլխավորապես ծրագրվել է Մեծ Բրիտանիայում, կան նաև կարծիքներ այլ, ոչ եվրոպական երկրների մասնակցության մասին): Այս ամենի առիթով նկատենք, որ այսօր Արևմուտքում կատարվում և հրապարակվում են բազմաթիվ հետազոտություններ, որոնց նպատակն է վերլուծել և բացահայտել այս կամ այն երկրում հեղափոխություններ կատարելու համար անհրաժեշտ նախադրյալները և պայմանները: Այսինքն՝ ձևավորվել է գիտական մի նոր ուղղություն, որը պայմանականորեն կարելի է անվանել «հեղափոխագիտություն»<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ, ըստ մեր վարկածի, ՀՀ-ում կատարվածի նպատակը (ի տարբերություն այլ ԳՀ-ների) իշխանափոխությունը չէր: Այդ գործընթացը պայմանականորեն կարելի է անվանել «մասնակի հեղափոխություն», այսինքն՝ նախագծի հեղինակները նպատակ չէին դրել իշխանափոխություն կատարել ՀՀ-ում: Նման մոտեցումը հիմնավորված է հետևյալ նկատառումներով:

- Կասկած չի հարուցում, որ ԳՀ-ի իրական հեղինակները պետք է հստակ գիտակցեին, որ՝
- ՀՀ-ն բավական ամուր պետականություն ունեցող երկիր է (դա հետևում է թեկուզ արևմտյան հետազոտական կենտրոնների կողմից կազմված բազմազան վարկանիշային ցուցանիշներից և պետք է որ հաստատվի տարբեր խողովակներով առաքվող «փակ» վերլուծություններից),
  - ՀՀ ղեկավարությունը, ունենալով բավարար քաղաքական կամք և մասնավորապես՝ պատերազմական փորձառություն, երբեք ուժային կամ հոգեբանական ճնշման տակ չի գիջի իշխանությունը:

<sup>1</sup> Բնորոշ է, որ այդ ուսումնասիրություններում գրեթե չի դիտարկվում արտաքին գործոնի դերը, ինչը գիտամեթոդական տեսանկյունից խիստ խոցելի է դարձնում նման հետազոտությունները: Մակայն պետք է կարծել, որ արտաքին դերակատարման չափը և ձևերը մշակվում են այլ (առաջին հերթին՝ տեղեկատվական-հոգեբանական գործողությունների ոլորտի) մասնագետների կողմից, և այդ մշակումները հրապարակման ենթակա չեն:

Որ կատարվածի նպատակն իշխանափոխությունը չէր, անուղղակիորեն վկայում են նաև աշխարհաքաղաքական իրողությունները: Առայսօր անգլոսաքսերի վարած ռազմավարությունը ՀՀ-ի նկատմամբ սխեմատիկորեն կարելի է բնութագրել հետևյալ դրույթներով.

1. ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները, ելնելով իրենց տարածաշրջանային քաղաքականության տրամաբանությունից, ձգտում են հնարավորինս խարխլել ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունները, իսկ լավագույն տարբերակով՝ դրանց հաղորդել երկրորդական նշանակություն,
2. ելնելով, մասնավորապես, Ցեղասպանության և ԼՂՀ հիմնախնդիրներից՝ Ադրբեջանի և Թուրքիայի դեմ որոշ իրադրություններում ՀՀ-ն որպես զսպիչ գործոնի օգտագործում,
3. երկրորդ կետի համատեքստում հավելելնք, որ հաճախ նույն մեթոդաբանությամբ Ադրբեջանի և Թուրքիայի հարձակողական տրամադրություններն օգտագործվում են նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի վրա ճնշումներ կատարելու նպատակներով, այսինքն՝ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները գործում են դասական աշխարհաքաղաքականության կանոնների համաձայն:

Ակնհայտ է, որ երկրորդ դրույթի իրագործման համար անհրաժեշտ է ի դեմս ՀՀ-ի ունեցած գործունակ ռազմաքաղաքական միավոր: Մինևույն ժամանակ, պետք է կարծել, որ ՀՀ-ում *ԳՀ-ի* նախագծողները հստակ պատկերացնում են, որ ԼՏՊ-ի և նրա թիմի կարողությունները բարձր չեն, և նրանք կարող են զգալիորեն թուլացնել ՀՀ-ն, իսկ նման երկիրը որպես լուրջ գործոն չի կարող հանդես գալ երկրորդ դրույթի համատեքստում:

Այսպիսով, որպես վարկած՝ կարելի է ընդունել, թե *ԳՀ-ի* հեղինակները հետապնդում էին հետևյալ նպատակը. պահպանել ներկայիս գործունակ և անհրաժեշտ հակաթուրքական (ադրբեջանական) ուղղվածություն ունեցող իշխանությունը, սակայն վերջիններիս թուլացնել, ավելի «լսող» դարձնել: Դա հնարավորություն կտար, մասնավորապես, իրականացնել, ըստ սեփական պատկերացումների, ոչ միայն հակաթուրքական (ադրբեջանական) աշխարհաքաղաքական խաղը, այլև մասամբ լուծել առաջին և երրորդ կետերում դրված խնդիրները (վերջինիս համատեքստում առաջին նախագահի պարտավորական-գաղափարախոսական ուղղվածությունն ավելի քան տեղին է):

Հետընտրական գործընթացներից, ըստ մեզ, հետևում է, որ Լ. Տեր-Պետրոսյանը մինչև ինչ-որ պահ համոզված էր, որ *ԳՀ* հեղինակները մինչև իր վերջնական հաղթանակը պետք է սատարեն իրեն: Սակայն դա տեղի չունեցավ<sup>1</sup>, և ներկայիս արտաքին ճնշումներն ուղղված են գլխավորապես ոչ հօգուտ Լ. Տեր-Պետրոսյանի (ընտրությունների արդյունքները կարծես թե ոչ մեկի կողմից կասկածի տակ չեն դրվում). արևմտյան քաղաքական շրջանակների հիմնական «մտահոգությունը» իշխանությունների ուժային գործողություններն են և դրանց հետևանքները, այսինքն՝ նպատակ են հետապնդում ճնշումներ կիրառել ՀՀ իշխանությունների վրա: Դրան զուգահեռ՝ *ԳՀ-ի* հեղինակները փորձելու են առավելագույնս օգտագործել առաջին նախագահի հրահրած շարժումը՝ որպես ՀՀ իշխանությունների վրա ներագդելու շարունակական գործոն:

### ***Հողմադացներ կառուցելու ժամանակը***

Վերոնշյալի առիթով հարկ է նկատել, որ ցանկացած հասարակական-քաղաքական շարժման հետագա զարգացումների կանխատեսումը, փոփոխականների թվի շատ մեծ լինելու պատճառով, խիստ դժվար է անգամ ռազմավարական մտածողության հարուստ ավանդույթներ ունեցող ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների համար: Հետագա զարգացումների համատեքստում որոշիչ դերակատարում պետք է որ ունենա, անկասկած, հայաստանյան պետական-քաղաքական ընտրանին: Այս վերջինի համատեքստում, թերևս, օգտակար է մտաբերել Պեկինի Տյանանմեն հրապարակում տեղի ունեցածը:

<sup>1</sup> Այս հանգամանքը, կարելի է կարծել, անակնկալ էր առաջին նախագահի համար: Նկատենք սակայն, որ անուղղակիորեն այս վարկածի օգտին են խոսում նրա հողվածներն ամերիկյան մամուլում, որտեղ Լ.Տեր-Պետրոսյանը փաստորեն կշտամբում է արևմտյան երկրների դեկավարությանը ժողովրդավարության սկզբունքներից հետ կանգնելու առիթով:

Ինչպես հայտնի է, 1989թ. չինական իշխանությունները դաժանաբար, մեծ զոհերի գնով (2600 ցուցարար զոհվեցին), ցրեցին ուսանողության՝ Պեկինի Տյանանմեն հրապարակում շարունակաբար ընթացող զանգվածային հանրավաքը: Ուսանողները համակարգային փոփոխություններ էին պահանջում... Միևնույն ժամանակ, վերլուծաբանների մի զգալի մասը համոզված է, որ 90-ականների սկզբին սկսված և առայսօր շարունակվող Չինաստանի սրընթաց վերելքը մեծ չափով պայմանավորված է այն եռանդուն բարեփոխումներով, որոնք հետևեցին Տյանանմենի դրամատիկ իրադարձություններին: Չինական քաղաքական ընտրանին այդպիսով կարողացավ երիտասարդության կուտակված դժգոհության ապակառուցողական, հանրահավաքային եռանդը (էներգիան) վերածել կառուցողականի: Այսպիսով, ՉԺՀ-ում գործնական հարթությունում իրագործվեց ազգային անվտանգության համակարգի այն հայտնի թեզը, որը չինական մեկնաբանությամբ հնչում է մոտավորապես այսպես. «Երբ փչում է ուժեղ հողմը, ոչ միայն վրաններ պատրաստիր, այլև հողմադացներ կառուցիր...»:

*Գազիկ Հարությունյան  
«Նորավանք» հիմնադրամ*

## АРМЯНСКАЯ БЛОГОСФЕРА И ПРЕЗИДЕНТСКИЕ ВЫБОРЫ

Блоги (интернет-дневники) на сегодняшний день являются самой развивающейся частью интернета. Из более чем 150 млн веб-сайтов в мире половина является блогами, то есть персональными страницами конкретных интернет-пользователей, которые могут размещать на них собственную информацию. Блоги часто бывают сугубо личными, где размещается персональная информация о пользователе, которая может заинтересовать только близких ему людей. Однако сейчас наиболее популярными являются тематические блоги, на которых профессионалы по тем или иным областям размещают свое мнение, аналитику и прочее относительно конкретных областей. Подобные блоги по авторитетности и посещаемости на Западе уже серьезно конкурируют в интернете с прессой. Популярный блоггер ежедневно может иметь десятки тысяч посетителей на своем сайте, что все более и более увеличивает влияние блогов. Многие СМИ теперь ведут на своих сайтах и блоги ведущих журналистов, тем самым принимая новые требования интернета. Во многих тоталитарных странах блоггеров преследуют так же, как и оппозиционных журналистов.

Блоги также получили свое место и в политике. Например, все кандидаты в президенты в Соединенных Штатах еще год назад открыли свои блоги для прямого интерактивного общения с общественностью через интернет. Также много российских политиков, депутатов, журналистов также ведут свои блоги, которые имеют серьезное влияние на социальную жизнь в стране и по многим вопросам реагируют намного быстрее СМИ.

В Армении блогосфера, как и интернет в целом, слабо развита. В то же время, предвыборная гонка, развернувшаяся в Армении с осени 2007г., привела к беспрецедентному росту активности в армянской блогосфере. За последние месяцы открылось несколько сот армянских блогов. Если ранее это были в основном блоги армян из диаспоры, то теперь по активности локальные стали доминировать в связи с тем, что преподносят информацию непосредственно с мест событий.

Армянскую блогосферу можно разделить на три части. Наиболее массовая – русскоязычная, затем идут англоязычная и армяноязычная. При этом чаще всего используются все три языка, но предпочтение отдается одному. Наиболее активно развивающимся сегментом армянской блогосферы является площадка *Livejournal.com* (в последние дни большой популяризации этого ресурса стал факт открытия именно здесь блога Сержа Саркисяна - <http://serzhhsargsyan.livejournal.com/>). Здесь основную часть составляют русскоязычные блоги, причем их читателями являются не только армяне, но также и жители стран СНГ, Израиля и т.д. Также блоги присутствуют на таких крупных площадках, как *Blogspot.com*, *Wordpress.com*. Эти блоги по большей части являются англо- и армяноязычными.

Предвыборная активность в армянском обществе перекинулась и на блоги. Если ранее в политических темах преобладали больше карабахская тема, отношения с Азербайджаном и Турцией и т.п., то в последнее время эти темы практически полностью отошли на задний план и основной проблемой стала внутривнутриполитическая ситуация в стране. Так, журналист Онник Крикorian ведет отдельный блог, который посвящен исключительно выборам (<http://blog.oneworld.am/>).

Изначально в блогах присутствовали люди, приближенные к штабу Тер-Петросяна. Они же инициировали создание блога на сайте Тер-Петросяна, на котором велась пропагандистская деятельность против властей.

В январе-феврале в *Livejournal.com* появилось более десятка новых блогов, которые носили откровенно пропагандистский характер и распространяли негативную информацию о властях с одной стороны, и о Тер-Петросяне и его сторонниках – с другой. Однако, как показал опыт, этот метод не стал действенным. *Как оказалось, армянские пользователи с недоверием*

относятся к неизвестным и неавторитетным блогерам. В дальнейшем деятельность этих блогов свелась в минимуму, так как обе стороны поняли, что цель, поставленная перед этими интернет-дневниками, не достигается в должной мере.

Однако наиболее популярные блогеры вели активную пропаганду и антипропаганду, которая в основном была направлена либо против властей, либо против Тер-Петросяна. При этом активность блогеров возрастала по нарастающей с начала текущего года.

События 1 марта привлекли внимание к армянской блогосфере как среди армян, так и зарубежных читателей. Уже с момента начала беспорядков блогеры, которые жили в гуще событий вели он-лайн репортажи с места событий.

Уже ранее этого среди блогеров возник раскол по политическим пристрастиям. Однако события 1 марта привели к окончательному разделению блогосферы на несколько враждующих лагерей. Одна часть блогеров, вне зависимости от политических пристрастий, восприняла произошедшее как попытку мятежа и подрыв государственности, и начала акцию по разоблачению дезинформации, которая стала распространяться в виде слухов и записей в блогах людей, близких к «левонаканам». Оперативно был создан ряд записей, которые были подняты в Топ-Яндекса (здесь появляются самые популярные записи во всей русскоязычной блогосфере), за счет чего количество посетителей этих записей увеличилось в несколько раз за счет зарубежных пользователей, которые были заинтересованы в происходящих событиях. С частью из этих материалов можно ознакомиться по данным адресам:

<http://ahousekeeper.livejournal.com/179008.html>  
<http://ablertus.livejournal.com/34346.html>  
<http://athanatoi.livejournal.com/39606.html>  
<http://moonleight.livejournal.com/127270.html>  
<http://alkhimik.livejournal.com/89449.html>  
<http://ston-e.livejournal.com/37108.html>  
<http://alkhimik.livejournal.com/89058.html>  
<http://ahousekeeper.livejournal.com/179407.html>  
<http://dilanyan.livejournal.com/175088.html>  
<http://alkhimik.livejournal.com/89058.html>  
<http://zabriskie-point.livejournal.com/145721.html>  
<http://ablertus.livejournal.com/34279.html>  
<http://arin-berd.livejournal.com/23979.html>  
<http://uzogh.livejournal.com/164302.html>  
<http://ahousekeeper.livejournal.com/179008.html>  
<http://cc-tun.livejournal.com/21028.html>  
<http://ston-e.livejournal.com/36862.html>  
<http://pigh.livejournal.com/77912.html>

После введения чрезвычайного положения интерес к блогам еще более повысился. В условиях закрытости ряда оппозиционных СМИ, блокирования в интернете ряда информационных сайтов, а также минимизирования информации через официальные источники, блоги частично приняли на себя роль прессы. Надо учитывать, что на данный момент аудитория популярного блога достигает нескольких сот уникальных посетителей в день. С учетом того, что важные новости копируются часто сразу на нескольких блогах, то можно утверждать, что блогосфера по степени влияния на данный момент по крайней мере не уступает армянским он-лайн информационным изданиям.

Со списком наиболее популярных армянских блогов (включая армян из диаспоры), размещенных на *Livejournal.com*, можно ознакомиться по следующему адресу: <http://www.miacum.ru/gazeta/armblogs>.

*Самвел Мартиросян*

**ԼՂՀ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ**  
**«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ**  
**ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

*- Ձեր կարծիքով՝ 2007թ. ընթացքում աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն) մոտ որևէ փոփոխություն նկատվե՞լ է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ: Եթե այո, ապա որո՞նք կառանձնացնեիք:*

- Նախ պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի յուրահատկություններից մեկն այն է, որ հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ինչպես նաև համանախագահող երկրները (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա), ինչպես իրենք են նշում, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ունեն գրեթե միևնույն պատկերացումը և հանդես են գալիս ընդհանուր մոտեցումով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցային գործընթացի շրջանակներում: Ինչպես գիտեք, համանախագահները հանդես են գալիս որպես միջազգային միջնորդներ բանակցային գործընթացում, իսկ սա նշանակում է, որ նրանք նպատակ չունեն հակամարտության կողմերին պարտադրել կարգավորման որևէ տարբերակ կամ լուծում, այլ ընդհակառակը, նրանց նպատակն է օժանդակել հակամարտության կողմերին բանակցությունների միջոցով գտնել իրենց համար ընդունելի և փոխշահավետ լուծում, որն, իր հերթին, ընդունելի կլինի նաև իրենց ժողովրդի կողմից:

Այսօր գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնց շուրջ ձեր նշած աշխարհաքաղաքական խոշոր կենտրոնների միջև առկա են սկզբունքային լուրջ տարաձայնություններ: Նշված խնդիրների թվում են, օրինակ, Իրանի հարցը, Պաղեստինյան խնդիրը, Կոսովոյի ապագա կարգավիճակի հարցը, Արևելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղադրման հարցը և այլն: Այս և մի շարք այլ խնդիրների համատեքստում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կարծես թե երկրորդ պլան է մղվել, որի պատճառով էլ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացում լուրջ տեղաշարժեր չեն գրանցվել:

Անցած 2007թ. ընթացքում շարունակվել են Հայաստանի և Ադրբեջանի նախագահների և արտգործնախարարների մակարդակով ընթացող խորհրդակցությունները: Տեղի են ունեցել նաև համանախագահների հետ արտգործնախարարների առանձին հանդիպումներ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան են այցելել՝ երեք կողմերի դիրքորոշումները քննարկելու համար:

Հարկ է նշել նաև, որ ամեն ինչ չէ, որ կախված է միայն միջնորդների դիրքորոշումից: Կողմերն իրենք շատ բան ունեն անելու խնդրի վերջնական կարգավորման համար, և առանց կողմերի համաձայնության՝ դժվար թե հնարավոր լինի որևէ հաջողության հասնել հակամարտության խաղաղ կարգավորման հարցում:

2007թ. ընթացքում Եվրամիությունը նույնպես շարունակել է իր քաղաքականությունը վարել, ինչպես նաև փորձել է խորացնել ներգրավվածությունը հարավկովկասյան գործընթացներում՝ մասնավորապես «Նոր եվրոպական հարևանություն» քաղաքականության ծրագրի շրջանակներում: Այնուամենայնիվ, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման հարցում այն դեռևս որևէ ուղղակի մասնակցություն կամ դերակատարություն չունի:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2007թ. ընթացքում Ադրբեջանը շարունակել է Լեռնային Ղարաբաղի խնդիրն այլ միջազգային կառույցներ տեղափոխելու իր ջանքերը, ռազմատեսչ և բանակցությունների ոգուն հակասող հայտարարությունները, հակահայկական քարոզչությունը երկրի ներսում և դրսում, ինչպես նաև խոչընդոտներ է հարուցել տարածաշրջանում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների աշխատանքներին: Չնայած Ադրբեջանի ջանքերին՝ համանախագահող երկրները, ինչպես նաև այլ միջազգային և եվրոպական կառույցներ կրկին իրենց աջակցությունն են հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցություններին և նրանց կողմից գործադրվող ջանքերին:



Անցած 2007 թվականը նշանակալից էր նաև այն իմաստով, որ այն բանից հետո, երբ Կոստվոյի հիմնախնդրի շուրջ Բելգրադի ու Պրիշտինայի միջև ընթացող բանակցություններն ավարտվեցին անհաջողությամբ, միջազգային հանրությունը, մասնավորապես ԱՄՆ-ը, Եվրամիության շատ երկրներ, առաջին անգամ հանդես եկան Կոստվոյի անկախության միակողմանի հռչակման օգտին: Կոստվոյի անկախության միակողմանի հռչակումն ու դրա ճանաչումը, եթե, իհարկե, դա տեղի ունենա, շատ լուրջ ազդեցություն կունենա մի շարք ինչպես փոխակերպվող ժամանակակից միջպետական հարաբերությունների, այնպես էլ ժամանակակից միջազգային հարաբերությունների ողջ համակարգի վրա:

*- 2007 թվականի համար ի՞նչ տեղաշարժեր կառանձնացնեիք հարավկովկասյան աշխարհաքաղաքական զարգացումներում, որոնք իրենց ազդեցությունն ունեն կամ կարող են ունենալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վրա:*

- 2007թ., ինչպես գիտեք, ՀՀ-ում կայացել են Ազգային ժողովի, իսկ ԼՂՀ-ում՝ նախագահական ընտրություններ: Ս.թ. փետրվարին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեցին նաև հերթական նախագահական ընտրություններ: Այսօր մեզ անհրաժեշտ է ավելի ամրապնդել մեր դիրքը միջազգային հանրության առջև, ինչպես նաև մեկ անգամ ևս ապացուցել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած, ժողովրդավարական սկզբունքներին հավատարիմ և օրենքի իշխանությանը ձգտող երկիր է, որտեղ բոլոր պետական մարմիններն ու ինստիտուտները գործում են լիարժեք՝ համապատասխան հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին: Իհարկե, մեզ համար չափազանց կարևոր են նաև ՀՀ նախագահական ընտրությունները, քանի որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության և անկախության դե-յուրե ճանաչման համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ, ժողովրդավարական Հայաստանի Հանրապետության:

2007թ. շարունակվել է նաև լարվածությունը Իրանի միջուկային ծրագրի շուրջ: Այս խնդիրը ևս լուրջ վտանգ է պարունակում տարածաշրջանի համար: Չնայած 2007թ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական գործակալության զեկույցում ասվում էր, որ Իրանը դեռևս 2003թ. դադարեցրել է միջուկային զենք ստեղծելու իր փորձերը, այնուամենայնիվ, Իրանի հարաբերությունները ԱՄՆ-ի և Եվրամիության որոշ երկրների հետ մնում են բավական լարված: Հետևաբար, մեզ համար շատ կարևոր է, որպեսզի այս խնդիրը կարգավորվի բացառապես խաղաղ և դիվանագիտական ճանապարհով:

2007թ. ընթացքում, ընդհանուր առմամբ, շարունակվել են այն աշխարհաքաղաքական զարգացումներն ու գործընթացները, որոնք սկսվել էին դեռևս նախորդ տարիներին: 2007թ. կարևորագույն հաջողություններից մեկն էլ այն էր, որ մեզ հաջողվել է պահպանել հաստատված հարաբերական խաղաղությունը, երկրի տնտեսական, քաղաքական ու հասարակական զարգացումը, էլ ավելի ամրապնդել մեր պետականությունը:

*- Ձեր գնահատմամբ՝ աճել է, արդյոք, պատերազմի հավանականությունը Ադրբեջանի հետ, և ո՞ր է տանում դինամիկան:*

- Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2007թ. Ադրբեջանում տարբեր մակարդակների վրա շարունակել են հնչել ռազմատենչ հայտարարություններ, էլ ավելի է ուժեղացել հակահայկական քարոզչությունը: Այնուամենայնիվ, չեմ կարծում, թե պատերազմի հավանականությունը նախորդ տարվա ընթացքում աճել է, քանի որ այս բոլոր երևույթները, ցավոք, արդեն սովորական են դարձել, իսկ ադրբեջանական կողմը շարունակում է դրանք օգտագործել ինչպես իր ժողովրդին, այնպես էլ միջազգային հանրությանն ապատեղեկացնելու ու շանտաժի ենթարկելու նպատակով:

Անկախ ամեն ինչից, մենք շարունակելու ենք մեր արտաքին քաղաքականությունը՝ կառուցել, ելնելով այն իրողությունից, որ պատերազմի հավանականությունը միշտ էլ եղել ու դեռ այսօր էլ շարունակում է մնալ: Հետևաբար, այսօր, կողմերի միջև զինադադարի ամրապնդման և հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու վերաբերյալ իրավական ուժ ունեցող որևէ համաձայնագրի բացակայության պարագայում ԼՂՀ անվտանգության, ինչպես նաև երկրում խաղաղության ու կայունության երաշխավորները մնում են ԼՂՀ Պաշտպանության բանակն ու Հայաստանի Հանրապետությունը:

*Հունվարի 18, 2008թ.*

## ИНТЕРВЬЮ С СЕРГЕЕМ МИНАСЯНОМ<sup>1</sup>

*Как Вы думаете, изменилось ли в 2007 году отношение крупных геополитических акторов (США, Россия, Евросоюз) к проблеме Нагорного Карабаха? Если да, то какие именно изменения Вы бы отметили?*

Особого изменения не наблюдается, динамика отношения основных геополитических акторов к проблеме Нагорного Карабаха остается стабильной, и на фоне осознания внешними акторами невозможности компромиссов сторонами на нынешнем этапе главным приоритетом остается поддержание обыкновенного формата вялотекущей имитации переговоров.

*Какие сдвиги в южно-кавказских геополитических развитиях за 2007 год повлияли или могут повлиять на проблему Нагорного Карабаха?*

Обострение внутривосточной ситуации в Грузии, вывод российских баз из Грузии, усиление российского экономического присутствия в Армении, продолжение общей милитаризации в государствах региона, деактуализация на нынешнем этапе военной операции против Ирана.

*Как по-вашему, возросла ли вероятность начала войны с Азербайджаном и, в этом аспекте, куда ведет динамика?*

Усилилась милитаризация и гонка вооружений, однако во многом в силу того, что военный баланс сохраняется (но уже на более высокой точке соотношения военных потенциалов сторон) вероятность начала войны с Азербайджаном в краткосрочной перспективе не изменилась – не усилилась, но и не уменьшилась.

*11 февраля, 2008г.*

---

<sup>1</sup> Сергей Минасян - Руководитель отдела кавказоведения Кавказского института СМИ.

## ИНТЕРВЬЮ С ИГОРЕМ МУРАДЯНОМ<sup>1</sup>

*Как Вы думаете, изменилось ли в 2007г. отношение крупных геополитических акторов (США, Россия, Евросоюз) к проблеме Нагорного Карабаха? Если да, то какие именно изменения Вы бы отметили?*

Позиция США и России совершенно не изменилась. США время от времени пытались создавать очередные ограниченные во времени имитационные процессы урегулирования, заведомо обреченные на провалы вследствие их искусственности и отсутствия необходимых оснований. Администрация США в последние годы действовала совместно с правительством Великобритании, которая, после ряда попыток активизировать процессы урегулирования при участии европейских структур, также пришла к выводу о приемлемости того, что в мировой сети уже принято обозначать как «имитация», в применении к карабахской проблеме. Политика США и Великобритании на Южном Кавказе полностью подчинена проблемам добычи и транспортировки нефти и газа, и всю политику выстраивают с учетом этих целей, когда приоритетами стали обеспечение необходимого уровня стабильности и безопасности, без чего невозможно осуществить энергетические проекты. После завершения проектов по созданию энергетических коммуникаций представления двух держав о допустимых уровнях рисков изменились; несколько изменилась и ситуация в Абхазии и Южной Осетии, где происходили неприятные события, что было приобщено к политике в отношении России. Но это касалось только грузинских сюжетов, в отношении карабахской провинции все оставалось по-старому. Представления США и Великобритании о возможных предложениях по урегулированию исчерпаны, и именно 2007г. предоставил возможность убедиться в этом после «пика урегулирования», который имел место в 2006г. В настоящее время единственной задачей США и Великобритании в отношении карабахской провинции стало недопущение возобновления военных действий. Вряд ли будущая администрация демократов в США станет предпринимать радикальные попытки по урегулированию данной проблемы и ее политика сведется к продолжению процесса имитации, хотя со временем делать это будет все сложнее. Нужно вспомнить, что Ки-Уэст, который очень быстро убедил республиканскую администрацию в тщетности процесса реального урегулирования, был как таковой подготовлен и сконструирован в бытность клинтоновской администрации, которой не хватило времени, чтобы самой убедиться в тщетности этих попыток.

Позиция России наименее интересна и продолжает оставаться прежней. Россия предпочитает видеть карабахскую проблему в законсервированном виде. Если ранее Россия опасалась того, что основной блок вопросов в части урегулирования может быть решен без ее фактического участия, то сейчас эти опасения исчерпаны. В позиции Европейского Союза действительно произошли серьезные изменения. Позиция Европейского Союза теперь вполне идентична позиции США. Политика Запада в отношении Южного Кавказа стала более согласованной и сосредоточена в рамках отношений между Даниэлем Фридом и Хавьером Соланой. Практически, более никто не испытывает желания вторгаться в кавказские проблемы. Коррупцированные европейские чиновники вынуждены отдыхать, и им предстоит неприятные объяснения со своими клиентами от азербайджанского официоза.

---

<sup>1</sup> Игорь Мурадян - Эксперт по вопросам безопасности.

*Какие сдвиги в южно-кавказских геополитических развитиях за 2007 год повлияли или могут повлиять на проблему Нагорного Карабаха?*

2007 год в еще большей мере подтвердил, что в мире начался процесс перекройки государственных границ, что является одной из стратегий США. Данный процесс не столь однозначен, как хотелось бы и как его видят аналитики, мыслящие более оригинально, нежели представители банального политического ангажемента. Вместе с тем, США предстали перед жесткой реальностью, когда управление регионами становится более сложным, и так или иначе должны приступить к реализации данной стратегии. К сожалению, пока Россия остается на тех же позициях, что и Европейский Союз, что объясняется неподготовленностью политических лидеров России к новым мировым реалиям. Вместе с тем, выясняется, что только две державы в мире (пока) заинтересованы в перекройках и создании новых конструкций в мировой геополитике – США и Россия, что отличает их от Европы. Именно эта идентичность политической ментальности приводит США и Россию к новому кругу соперничества. Это те процессы, с которыми можно вполне консолидироваться, но где можно и проиграть, причем по крупному, как это имело место в начале 20 века.

2007 год одновременно внес существенные коррективы в перспективы интеграции с НАТО стран Южного Кавказа, принеся гораздо больше пессимизма. Акценты перенесены в бассейн Черного моря, где США реализуют новые планы военного присутствия, которые привели к консолидации усилий Турции и России, с которыми солидаризируется Иран. Практически, главные факторы, влияющие на развитие процессов в Южном Кавказе переключались из Каспийского бассейна в Черное море. Игра стала сложнее, а вызовы – серьезнее.

*Как по-вашему, возросла ли вероятность начала войны с Азербайджаном и, в этом аспекте, куда ведет динамика?*

Азербайджанское руководство официально объявило о применении системной политики функциональной блокады Армении, опираясь на крупные нефтяные доходы. Данная политика не нужна правительству, которое имеет серьезные намерения возобновить войну. Однако и эти планы по блокированию Армении очень скоро утратили свою значимость и стали бессмысленными, так как азербайджанские руководители очень быстро убедились в тщетности этих планов в современном мире. Азербайджанские «шефы», после мая 1994 года, никогда не имели в виду возобновить войну с Арменией «один на один». Данная война может происходить либо при полном одобрении со стороны Турции, либо при ее участии. Эти принципы были обговорены в апреле 1998 года в Анкаре С.Демирелем и Г.Алиевым. Данная война не может быть обусловлена внесистемными факторами. Если отношения между Турцией и США, а также между Турцией и Россией будут улучшаться, то война между Арменией и Азербайджаном утратит смысл. Если в Турции получают развитие деструктивные процессы, связанные с усилением радикальных идей, ситуация изменится. Одним из факторов начала войны может быть стремление внести серьезные конфронтационные моменты между Турцией и Россией, когда лучшим способом может стать война между Арменией и Азербайджаном. Но вряд ли найдутся политики, которые могли бы допустить столь опасный сценарий.

Армению, как и другие государства, ожидают три наиболее опасных вызова:

1. Надвигающийся мировой экономический кризис;
2. Кардинальные изменения в правилах мировой политики;
3. Возможная резкая конфронтация в Черноморско-Кавказском регионе, что будет граничить с региональной войной.

Готова ли актуальная армянская элита осмыслить и достойно встретить эти вызовы?

*15 января 2008г.*

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՄՆ Ֆլորիդայի պետական համալսարանի Միջազգային  
հարաբերությունների ֆակուլտետի փոխդեկան **Ասպետ Քոչիկյանի** հետ

- *Ձեր կարծիքով՝ 2007թ. ընթացքում աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն) մոտ որևէ փոփոխություն նկատվե՞լ է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ: Եթե այո, ապա որո՞նք կառանձնացնե՞իք:*

- Չեմ կարծում, թե որևէ մեծ փոփոխություն է տեղի ունեցել: Այսինքն՝ տեղի են ունեցել ավելի փոքր՝ մարտավարական նշանակության փոփոխություններ: Օրինակ, եթե մինչև 2007թ. ուժի վերոհիշյալ կենտրոնները թեև ունեին տարաձայնություններ, սակայն անցած տարի այդ հակասություններն ավելի ակնառու դարձան, որոնք էլ իրենց ազդեցությունը թողեցին տարածաշրջանի վրա և որոշակի իմաստով անդրադարձ ունեցան Լեռնային Ղարաբաղի հարցում: Բայց քանի որ 2007թ. շատ բեղուն տարի էր իրադարձությունների իմաստով (օրինակ, ԱՄՆ խնդիրներն Իրաքում ու Աֆղանստանում), չեմ կարծում, թե որևէ փոփոխություն է տեղի ունեցել այդ կենտրոնների քաղաքական գործիչների մտքերում՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ, որովհետև որևէ գործողություն չեն իրականացրել հակամարտության առնչությամբ՝ նորուղղությունների մշակման համար: Կարծում եմ՝ անցած տարի այդ ուժի կենտրոնների օրակարգում Լեռնային Ղարաբաղի հարցն այդքան էլ մեծ տեղ չի զբաղեցրել:

- *2007թ. համար ի՞նչ տեղաշարժեր կառանձնացնե՞իք հարավկովկասյան աշխարհաքաղաքական զարգացումներում, որոնք իրենց ազդեցությունն ունեն կամ կարող են ունենալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վրա:*

- Այս պարագայում գլխավոր կետը Ռուսաստանի քաղաքականությունն էր Վրաստանի նկատմամբ: Որպես առաջնային օրինակ կարելի է բերել այն, որ 2007թ. առնվազն երկրորդ կեսում ռուս-վրացական հակասությունները մեղմացան՝ նախորդ ամիսների կամ նույնիսկ տարիների համեմատ: Արդյոք սա ռուսական նախաձեռնություն էր, թե՞ վրացական: Առայժմ չեմ կարող ասել: Եթե ռուսների նախաձեռնությունն էր, ապա կարող ենք ասել, որ Մոսկվան ցանկանում է վերանայել իր քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ, ընդ որում՝ նաև չլուծված հակամարտությունների նկատմամբ՝ Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա: Այս պարագայում Ռուսաստանի քաղաքականության փոփոխությունը, որը, ես ենթադրում եմ, տեղի է ունենում, կարող է իր ազդեցությունն ունենալ Լեռնային Ղարաբաղի հարցում՝ այն իմաստով, որ Մոսկվայի հեղինակությունը կարող է բարձրանալ: Օրինակ, ադրբեջանցիները կարծում են, թե Ռուսաստանի դիրքորոշումը միակողմանի է՝ հայամետ, իսկ հավասարակշռված մոտեցումը կարող է մեծացնել նրա հեղինակությունը, ինչն էլ կարող հանգեցնել միջնորդական առաքելության որակի բարձրացմանը, և հարցի լուծումը կարող է առաջ գնալ: Կարծում եմ՝ անկախ այն բանից, թե Հարավային Կովկասի նկատմամբ ինչ նոր ծրագրեր կմշակեն Միացյալ Նահանգներում կամ Արևմուտքում, առանց Ռուսաստանի համաձայնության դժվար թե այդ ծրագրերը կյանքի կոչվեն այստեղ:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Անկարայի համար առաջնայինը Հյուսիսային Իրաքում առկա իրավիճակն է: Եթե խոսենք այն մասին, թե 2007թ. ինչ առաջնություններ են սահմանվել թուրքական արտաքին քաղաքականության համար, ապա պետք է նշել, որ առաջին տեղում Հյուսիսային Իրաքն էր: Հավանական է, որ դրա արձագանքները մենք այս տարի նույնպես տեսնենք: Այդ պատճառով Թուրքիայի հարավկովկասյան նոր քաղաքականության մշակումն առաջնային տեղում չէր Անկարայում:

Հետաքրքիր է Իրանի պարագան: Չնայած ամերիկա-իրանական հարաբերություններում շարունակվող լարվածությանը՝ հեղինակության բարձրացման նպատակով իրանական

կողմը բավական ակտիվ քաղաքականություն վարեց Հարավային Կովկասում: Օրինակ, անցած տարվա ընթացքում տեղի ունեցան իրանցի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների այցելություններ տարածաշրջան: Թեհրանի նպատակն է՝ այդ թվում Հարավային Կովկասում ստեղծել «ընկեր» երկրների մի շրջանակ, որպեսզի խոչընդոտի ԱՄՆ-ի կողմից իրականացվող շրջափակման քաղաքականությանը: Եվ կրկին պետք է նշել, որ Իրանն ընդունված է այս տարածաշրջանում, ընդունված է թե՛ հայերի, թե՛ ադրբեջանցիների կողմից: Եվ միակ պատճառը, որ Իրանը դուրս է մնացել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացից, Միացյալ Նահանգների ճնշումն է: Բացի այդ, պետք է նշել, որ անցած տարվա ընթացքում տարածաշրջանում նկատվեց Ռուսաստանի ու Իրանի քաղաքականությունների մերձեցում: Չէի ասի, թե մենք գործ ունենք Մոսկվա-Թեհրան առանցքի հետ, սակայն երկու երկրների քաղաքականությունների մերձեցում նկատվեց:

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել նաև այն, որ Ղարաբաղյան հակամարտության շուրջ առկա իրավիճակի վրա ազդեցություն ունեն ոչ միայն արտաքին ուժերը: Հայաստանն ու Ադրբեջանը նույնպես կարող են ասել իրենց խոսքը, հատկապես Ադրբեջանը, որն ինքնուրույն քաղաքականություն վարելու ավելի շատ ռեսուրսներ ունի:

*- Ձեր գնահատմամբ՝ աճել է արդյոք պատերազմի հավանականությունն Ադրբեջանի հետ, և ու՞ր է տանում դինամիկան:*

- Հարցը բաժանվում է երկու մասի: Եթե ցանկանում ես չափել պատերազմի հավանականությունը, պետք է հաշվի առնես կամ ռազմական ներուժի ոլորտում գրանցվող փոփոխությունները, կամ քաղաքական գործիչների հայտարարությունները:

Եթե դիտարկենք քաղաքական գործիչների հայտարարությունները, հատկապես՝ Ադրբեջանում, ապա մտավախությունը, թե կարող է պատերազմ սկսվել, աճել է, բայց ինչ վերաբերում է ռազմական ներուժի ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, ապա վիճակն անփոփոխ է: Հայաստանում՝ հաստատ: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա չնայած այնտեղի քաղաքական գործիչների ռազմաշունչ հայտարարություններին, այդ երկիրը ներկայումս ի վիճակի չէ պատերազմ վարելու: Որովհետև այդ երկիրն այսօր ունի սոցիալական բնույթի լուրջ խնդիրներ, իսկ այդպիսի խնդիրներ ունեցող պետությունը չի կարող պատերազմ սկսել: Իհարկե, ազգայնական գաղափարներով կարելի է «համոզել» բնակչության որոշ հատվածի, սակայն, ի տարբերություն 20 տարի առաջվա ադրբեջանցի երիտասարդի, այսօրվա ադրբեջանցի երիտասարդը շատ ավելի հետաքրքրված է իր ընտանիքի ապրուստով, քան Ղարաբաղը «ազատագրելով»:

Չնայած Ադրբեջանում դեռ գոյություն ունի ծայրահեղորեն տրամադրված ադրբեջանցիների լոբբիստական մի փոքր խումբ, որը շահագրգռված է Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու մեջ, սակայն չեմ կարծում, թե նրանք կարող են դա անել, որովհետև նրանք այսօր թվաքանակով քիչ են ադրբեջանական հասարակությունում: Ինչ վերաբերում է ադրբեջանցի կառավարության ռազմաշունչ հայտարարություններին, ապա դա արվում է ծայրահեղորեն տրամադրված այդ 10%-ին գոհացնելու համար, սակայն եթե պաշտոնական Բաքուն դիմի գործնական քայլերի (օրինակ, սկսի ռազմական գործողություններ), նա կարող է իր դեմ տրամադրել ադրբեջանական հասարակության առնվազն 80%-ին, որին այսօր պատերազմ պետք չէ:

*Հունվարի 15, 2008թ.*

## КОСОВО КАК ИНСТРУМЕНТ ГЛОБАЛЬНОГО ВОЗДЕЙСТВИЯ

Самопровозглашение Косово и последовавшие за этим признания республики со стороны ведущих держав не только способны привести к далеко идущим последствиям, но и являются метаморфизированной реанимацией американской политики начала прошлого века.

Косово провозгласил свою независимость 17 февраля. Незамедлительно в одностороннем порядке новую страну стали признавать Афганистан, Япония, Бельгия, Франция, Италия, Великобритания, Хорватия, Германия и США. За этим последовал ряд других европейских стран, таких как Норвегия, Финляндия, Швеция и Дания.

Понятно, что признание со стороны ведущих западных держав самопровозглашенной республики воодушевило ряд других народов, которые считают косовский случай прецедентом. Наиболее часто в связи с Косово упоминаются конфликты в Нагорном Карабахе, Абхазии, Южной Осетии, Приднестровье.

В этом контексте представляет интерес рассмотрение ряда случаев, которые затрагивают Евросоюз. Возникновение нового государства в самой Европе дает повод для других европейских народов, добивающихся независимости, с еще большей энергией поднимать свои вопросы.

После того, как французское руководство в числе первых приветствовало провозглашение независимости Косовского края, на сцене незамедлительно появились сепаратисты из Корсики, которые добиваются отделения от Франции. Корсиканская организация *Corsica Nazione Indipendente* выступила с заявлением, в котором поддержала «братский народ косоваров». «Наше движение знает об отважной борьбе, которую ведете Вы и народ Косово против фальшивого суверенитета, который вам хотел навязать Белград со статусом автономии, не дающим никаких твердых гарантий для вашего народа», – говорится в письме корсиканской сепаратистской организации премьер-министру края Хашиму Тачи, сообщает ИТАР-ТАСС. Корсиканцы также высказывали надежду принять этим летом у себя на острове делегацию косовского правительства.

Также незамедлительно откликнулись на эту новость баскские и каталонские сепаратисты. Региональное правительство Страны басков, автономной области на севере Испании, видит в решении Косово объявить о своей независимости пример для подражания, заявила представитель этого правительства Мирен Аскарате, передает РИА «Новости»: «Речь идет о решении национального конфликта, аналогичного тем, что существуют в Стране басков и Каталонии (северо-восток Испании), путем осуществления демократического права народа на самоопределение».

В то время как в Европе с готовностью поддерживают косоваров, внутри Евросоюза за счет этого усиливается фактор нестабильности, уже не говоря о том, что Балканы в очередной раз становятся центром возможного хаоса.

Соединенные Штаты уже давно используют национальный элемент для создания точек нестабильности в регионах своего геополитического интереса. Наиболее ярко этот фактор был использован президентом США Вудро Вильсоном в период Первой мировой войны. Тогда Вильсон по нарастающей выдвигал тезисы о праве народа на самоопределение, что получило окончательное представление в так называемых «14 пунктах», которые он представил в 1918г. в качестве основополагающих норм урегулирования мирового конфликта. Именно тогда было закреплено право народов, как основных властеобразующих субъектов, на самоопределение. За счет этого был начат процесс образования сугубо национальных государств. При этом в своей политике Вашингтон опять же использовал в этом направлении двойные стандарты во время передела карты Евразии.

Вероятнее всего, в Вашингтоне решили реанимировать эти процессы, дав им новый толчок. С одной стороны, вновь на международном уровне поднят вопрос самоопределения народов. С другой стороны, идет откровенное использование избирательности подхода к этому вопросу.

Фактически, возникает не прецедент самоопределения народа, так как это право использовалась за последние десятилетия не один раз, как это было в случае с Бангладешем, Восточным Тимором или Эритреей, а бинарный прецедент: использование принципа самоопределения в конкретном избранном случае с использованием давления на ряд ведущих государств для фиксации факта.

Тем самым в руках у Белого дома оказывается рычаг давления на конкретные регионы. Учитывая текущие геополитические процессы и интересы Соединенных Штатов, можно ожидать, что избирательное самоопределение может быть использовано уже в ближайшие годы против основных экономических и геополитических конкурентов Вашингтона.

Для Европы, стремящейся к интеграции, как уже говорилось выше, продолжает оставаться актуальным ряд сепаратистских движений. Не исключено возникновение и новых, более мелких очагов, которые будут постоянно подрывать идею европейской семьи. Хотя в ближайшее время ожидать серьезных развитий в этом отношении в Корсике или Басконии, Фландрии в Бельгии не приходится, однако эти процессы окажут определенное негативное влияние на внутреннее состояние Евросоюза и будут играть на дискредитацию основополагающих европейских ценностей.

Другой точкой дестабилизации могут быть два региона в Китае – одном из основных конкурентов Вашингтона на мировой арене. Речь идет о Тибете, захваченном Китаем в 1950г., а также о Синьцзян-Уйгурском автономном районе. Если проблема Тибета менее взрывоопасна, то уйгурский сепаратизм, в котором перемешаны элементы как национализма, так и исламского радикализма, может стать серьезной проблемой для китайских властей, если он опять поднимет голову. Кроме того, уйгурский вопрос может быть поднят также и в Афганистане.

Таким образом, учитывая то огромное количество сил, которые направлял и направляет Вашингтон на косовский вопрос, следует предположить, что может начаться избирательное, точечное применение вильсоновских тезисов в стратегически важных для Белого дома регионах.

*Самвел Мартиросян*



## ПРАВО НА НЕЗАВИСИМОСТЬ. ЮРИДИЧЕСКИЙ ЛИКБЕЗ<sup>1</sup>

Провозглашение независимости Косово стало очередным проявлением конфликта двух фундаментальных принципов современного международного права: права наций на самоопределение и нерушимости государственных границ. Трактовка этих принципов и определяет будущее самопровозглашенного государства: страны, выступающие за или против независимости Косово, зачастую апеллируют к разным положениям одних и тех же международных соглашений.

Принцип территориальной целостности государств впервые был установлен в 1648г. Тогда был заключен Вестфальский мир, который положил конец серии войн, бушевавших на европейском континенте. Переговоры в Вестфалии положили конец Тридцатилетней войне – фактически, конфликту между католиками и протестантами, где на одной стороне воевали Швеция, Богемия, Дания, Нидерланды, Шотландия, Англия и Саксония, а на другой – Испания и Священная Римская империя и пр. «Восьмидесятилетней войной» обычно называют борьбу Нидерландов за независимость от Испании. Одним из положений Вестфальского мира, который перекроил государственные границы в Европе, стал принцип, согласно которому незаконным было признано внешнее вмешательство во внутренние дела государства, то есть принцип территориальной целостности государства. Этот постулат ныне общепринят и входит во все фундаментальные международные соглашения.

Однако одновременно Вестфальский мир фактически утвердил принцип права наций на самоопределение. Дело в том, что до восстания голландцев против Испании не подвергалось сомнению право монархов решать судьбы своих подданных. Однако в случае с Нидерландами недовольство подданных привело к тому, что монарх утратил это право. При подписании Вестфальского мира, европейские державы фактически признали это и согласились признать границы независимых Нидерландов. В долгосрочной перспективе это решение привело к уничтожению большинства европейских монархий, появлению многих независимых государств и серьезной перекройке государственных границ.

Գլխավոր հետևությունն է՝ եթե վերոհիշյալ երեք պարբերություններում ներկայացվածը ճիշտ է, ապա հնարավոր է, որ մենք գործ ունենք սկզբունքորեն այլ իրավիճակի հետ, քան մեզ երևում էր 2007թ. դեկտեմբերին:

### ***Իրանի միջուկային կարողություններ. նոր գնահատակա՞ն***

2008թ. փետրվարի 5-ին Միացյալ Նահանգների Ազգային հետախուզության տնօրեն (*Director of National Intelligence*) Ջոն Մայքլ Սըքթոնելը, ով, փաստորեն, համակարգում է այդ երկրի 16 հետախուզական գործակալությունների աշխատանքը, ԱՄՆ Սենատի Հետախուզության հանձնաժողովին ներկայացրեց «Վտանգի տարեկան գնահատական» (*Annual Threat Assessment*) զեկույցը: Փաստաթղթի՝ Իրանին վերաբերող մասում գլխավորապես առանձնացված է երկու հետևություն.

- Իրանը շարունակում է աշխատանքներն ուրանի հարստացման ոլորտում և միջուկային զենքի ստեղծման համար անհրաժեշտ հարստացված ուրան կարող է ստանալ արդեն 2010-2015թթ. ժամանակահատվածում (ինչպես հայտնի է, միջուկային զենքի ստեղծումը համեմատաբար հեշտ է, ավելի դժվար է ստանալ այդ զենքի ստեղծման համար անհրաժեշտ նյութերը),
- Իրանն աշխատանքներ է տանում հեռահար հրթիռների պատրաստման ուղղությամբ<sup>1</sup>:

Թեև նշված հետևություններն ինքնին որևէ նորություն չեն պարունակում և, օրինակ, հարստացված ուրանին վերաբերող մասը նույնությամբ վերցված է 2007թ. դեկտեմբերի 3-ին հրապարակված ԱՄՆ ԱՀԽ Իրանին վերաբերող փաստաթղթից (*NIC, Iran: Nuclear Intentions and Capabilities*), սակայն ուշադրություն է գրավում հետևյալը.

- ի տարբերություն ԱՀԽ 2007թ. դեկտեմբերյան զեկույցի, Սըքթոնելի ներկայացրածը կրկին առաջին պլան է մղում իրանական միջուկային և հրթիռային ծրագրերի վտանգավորությունը ԱՄՆ-ի համար,
- աստիճանաբար ի հայտ են գալիս նշաններ, որոնք թույլ են տալիս ենթադրել, թե հիմք ընդունելով նույն ԱՀԽ զեկույցը՝ ամերիկյան կողմը ձգտում է փոխել շեշտադրումները, ինչը կարող է բերել ԱՀԽ զեկույցի թողած քաղաքական հետևանքների արժեզրկմանը,
- ներկայացվածն էլ ավելի իրական է թվում, եթե հաշվի առնենք վերջին մի քանի շաբաթների Իրանի միջուկային ու հրթիռային ոլորտներում տեղ գտած իրադարձությունները<sup>2</sup>:

<sup>1</sup> Փաստաթղթում (*DNI, Annual Threat Assessment*) նշված է հետևյալը. «Չնայած առնվազն 2007թ. կեսի տվյալների համաձայն՝ դադարեցված էին Իրանի միջուկային զենքերի մշակման և ուրանի կոնվերսիայի ու հարստացման գաղտնի աշխատանքները, [սակայն] Իրանը շարունակում է ճեղքվող նյութերի (*fissile materials*) ու միջուկային [մարտազինակ կրելու] հնարավորություն ունեցող հրթիռների ստացման աշխատանքները»:

<sup>2</sup> 2008թ. փետրվարի 4-ին Իրանը հաջողությամբ իրականացրեց «Սաֆիր-1» անվամբ նոր հրթիռի փորձարկում, որը, հանդիսանալով 4000կմ հեռահարություն ունեցող «Շահաբ-3» հրթիռի մոդիֆիկացված տարբերակը, ուղեծիր դուրս բերեց իրանական արհեստական արբանյակը: Փետրվարի 6-ին հայտնի դարձավ, որ Իրանում ձեռնամուխ են եղել նոր՝ «Ք-2» ցենտրիֆուգների փորձարկմանը, որոնք 2-3

2007թ. դեկտեմբերի 10-ին ելույթ ունենալով Բահրեյնի մայրաքաղաք Մանամայում հրավիրված անվտանգության հարցերով միջազգային համաժողովում՝ ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը Իրանի առնչությամբ առանձնացրեց երկու կետ: 1. ԱՄՆ ԱՀԽ գեկույցը «բարձր վստահությանը (*high confidence*)» նշում է, որ նախկինում Թեհրանն ունեցել է միջուկային զենքի ստեղծման ծրագիր ու շարունակում է ունենալ այդպիսի զենք ստեղծելու հնարավորություն, 2. Իրանն աշխատանքներ է տանում միջին հեռահարության հրթիռների ստեղծման ուղղությամբ, որոնք, սակայն, արդյունավետ են միայն այն դեպքում, եթե կրում են միջուկային մարտագլխիկ:

2008թ. հունվարի 16-ին ԱՄՆ Հրթիռային պաշտպանության գործակալության տնօրեն, գեներալ Հենրի Օբերինգը հայտարարեց, թե Իրանն արագացրել է հեռահար հրթիռների ստեղծման աշխատանքները, որոնք կարող են հասնել Եվրոպայում տեղակայված ամերիկյան ռազմակայաններին:

Եվ վերջապես, փետրվարի 13-ին հանդես գալով կոնգրեսական լսումներում՝ ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենի տեղակալ Թոմաս Ֆինգերը կրկին առանձնացրեց այն կետը, թե Իրանն ունի տեխնիկական ու արդյունաբերական հնարավորություններ միջուկային զենք ստեղծելու համար:

### ***Հետևություններ***

Չնայած ամերիկա-իրանական բանակցություններին և նախորդ տարվա երկրորդ կեսին կողմերի միջև տեղ գտած պայմանավորվածությանը, Վաշինգտոն-Թեհրան հակասությունների առարկա հանդիսացող էական բոլոր կետերում շարունակում են պահպանվել տարաձայնությունները:

Սակայն այլևս հարկ է որպես մերձավորարևելյան իրավիճակի բնութագրիչներ դիտարկել ոչ թե իրանա-ամերիկյան գծում տեղ գտնող փոփոխությունները, այլ տարածաշրջանում ի հայտ եկող նոր իրողությունները ռազմատեխնիկական ու աշխարհաքաղաքական դաշտերում: Հավանական է, որ Մերձավոր Արևելքում որպես որոշիչ գործոններ սկսեն հանդես գալ.

- զանգվածային ոչնչացման զենքերի (առաջին հերթին հրթիռներ ու միջուկային զենք) ոլորտում նկատվող ձեռքբերումները մերձավորարևելյան տերությունների մոտ<sup>1</sup>,
- գրեթե փլուզման եզրին հայտնված Իրաքի, Աֆղանստանի ու Պակիստանի տարածաշրջանային դերակատարման էական թուլացմամբ պայմանավորված աշխարհաքաղաքական նոր կոնստրուկցիաների ի հայտ գալը (օրինակ, այսօր Արևմուտքում նպատակահարմար է դիտվում ներգրավել Իրանին՝ Աֆղանստանում ու միջուկային զենք ունեցող Պակիստանում կայունության հաստատման համար):

***Մարգիս Հարությունյան***  
***«Նորավանք» հիմնադրամ***

---

անգամ ավելի արագ են հարստացնում ուրանը, քան մինչ այդ Թեհրանի տրանսպորտային ներքո եղած «P-1»-երը: Եվ վերջապես, փետրվարի 13-ին ամերիկյան «Associated Press» լրատվական գործակալությունը գրեց, թե Իրանը սեփական տեխնոլոգիաներով կարողացել է ստանալ ուրանային գազ, որն անհրաժեշտ է ցենտրիֆուգների աշխատանքի համար՝ մի խնդիր, որը նախկինում անլուծելի էր իրանական կողմի համար:

<sup>1</sup> Պատահական չէ, որ վերջին երկու-երեք ամիսներին հատկապես արևմտյան փորձագիտական շրջանակները լքջորեն քննարկում են մերձավորարևելյան միջուկային պատերազմի սցենարները:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ՝ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

2008թ. մարտի 13-14-ը Սենեգալի մայրաքաղաք Դաքարում տեղի ունեցավ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) հերթական 11-րդ գագաթաժողովը՝ «Իսլամը 21-րդ դարում» խորագրով, որին մասնակցում էին 57 անդամ երկրների պատվիրակներ, շուրջ 40 իսլամական պետությունների առաջին դեմքեր: Հանդիպմանն ընդունվեց եզրափակիչ կոմյունիկե, որ արտացոլում էր իսլամական պետությունների համագործակցության տարբեր ասպեկտները, և Դաքարի հռչակագիրը:

Գագաթաժողովը կազմակերպության բարձրագույն մարմինն է, որը ԻԿԿ կանոնադրության համաձայն՝ գումարվում է երեք տարին մեկ անգամ, անդամ որևէ երկրում, միջազգային հարաբերությունների համատեքստում քննարկելու իսլամական աշխարհին հուզող խնդիրները: Գագաթաժողովից առաջ, մարտի 10-11-ը (ինչպես միշտ) տեղի ունեցավ իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպումը, որը նախապատրաստեց քննարկվող հարցերի շրջանակը:

### *ԻԿԿ արդիականացման հարցը*

Ճիշտ է, գագաթաժողովում առաջադրված էին բազմաթիվ հարցեր, սակայն հիմնական ուշադրությունը սևեռվեց մի քանի կարևոր խնդիրների վրա: Դրանցից մեկը կազմակերպության արդիականացման հարցն էր, մասնավորապես՝ նոր կանոնադրության ընդունումը: ԻԿԿ-ն հիմնվել է 1969թ. Ռաբաթում, իսկ կազմակերպության կանոնադրությունն ընդունվել է 1972-ին, այսինքն՝ Սառը պատերազմի տարիներին, երբ իսլամական աշխարհը երկփեղկված էր երկու մասի: Դեռևս այն ժամանակ ԻԿԿ կանոնադրության մեջ արտացոլվեցին արաբական իսլամական աշխարհի համար այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք էին Պաղեստինի և Երուսաղեմի խնդիրները, որոնք այսօր էլ շարունակում են օրակարգային մնալ:

ԻԿԿ արդիականացման հարցն առավել օրակարգային դարձավ 2004-ից ի վեր, երբ ԻԿԿ գլխավոր քարտուղար դարձավ Թուրքիայի ներկայացուցիչ, իսլամական աշխարհում բավական համարում ունեցող պրոֆ. Էքմեղլուդին Բիսանոլուն, ով ԻԿԿ ընտրանու աջակցությամբ ձեռնամուխ եղավ կազմակերպության բարենորոգման գործին: (Վերջինս Դաքարի հանդիպմանը վերընտրվեց երկրորդ անգամ՝ հինգ տարի ժամկետով): Նոր կանոնադրությունը, գլխավոր քարտուղարի խոսքերով, մատնանշում է իսլամի չափավորությունն ու հանդուրժողականությունը, իսկ կազմակերպության գործունեությունը դարձնում առավել արդյունավետ: Մասնավորապես, փոխված է որոշումների ընդունման մեխանիզմը: Եթե նախկինում որոշումներն ընդունվում էին կոնսենսուսով, ինչին շատ դեպքերում դժվար էր հասնել անդամ պետությունների ունեցած տարբեր քաղաքական կողմնորոշումների պատճառով, ապա այժմ որոշումները կարող են ընդունվել նաև 2/3-ով: Հատկանշական է, որ նոր կանոնադրության առանձին դրույթների հետ կապված՝ անդամ երկրների շրջանում անհամաձայնություններ են եղել: Օրինակ, ԻԿԿ անդամ Ուզանդան, որը փոքրաթիվ մահմեդական բնակչություն ունի, դեմ է եղել նորացված կանոնադրության մեջ ամրագրված այն դրույթին, համաձայն որի՝ ԻԿԿ անդամ կարող է լինել միայն այն պետությունը, որտեղ բնակչության մեծամասնությունը մահմեդական է: Իսկ Պակիստանը պնդել է, որ նախքան ԻԿԿ-ին անդամության հայտներկայացնելը, տվյալ պետությունը պետք է կարգավորի խնդիրներն անդամ երկրի կամ երկրների հետ, եթե այդպիսիք կան:



## ***Քննարկվող հարցերի շրջանակը***

Գազաթաժողովում քննարկվեցին մշակութային, սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական ոլորտներում իսլամական աշխարհին առնչվող խնդիրներ: Գազաթաժողովում բանաձև ընդունվեց ԻԿԿ տնտեսապես աղքատ, հատկապես Աֆրիկայի՝ Սահարայից արևմուտք ընկած անդամ պետություններին տնտեսական օգնություն ցույց տալու մասին, սահմանվեց նրանց երկարատև վարկեր տրամադրելու ձևաչափը, իսկ Զարգացման իսլամական համերաշխության հիմնադրամը որոշվեց համալրել \$10 մլրդ-ով: Իսլամական շրջանակներում գիտակցում են, որ իսլամական աշխարհը ներկայումս բախվել է մի շարք խնդիրների: Դրանք են՝ տնտեսական և սոցիալական հետամնացությունը, օտար ազդեցությունները, տարանջատումը, ինչը կարելի է հաղթահարել իսլամի հիմնարար արժեքները վերականգնելով:

Գազաթաժողովում քննարկվեցին իսլամական աշխարհի համար կնճռոտ այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են արաբ-իսրայելական հակամարտության և Երուսաղեմի խնդիրը, Լիբանանում նախագահական ընտրություններում ստեղծված ճգնաժամային վիճակը, Իրաքի, Սոմալիի, Դարֆուրի իրադրությունը, հարաբերությունները Չադի և Սուդանի միջև:

Գազաթաժողովից առաջ որոշակի տարաձայնություններ էր առաջացրել Կոսովոյի հարցը: Մասնավորապես Թուրքիան առաջարկել էր գազաթաժողովի եզրափակիչ կոմյունիկեում կետ մտցնել Կոսովոյի անկախության ճանաչման վերաբերյալ, ինչին դեմ էին արտահայտվել Ադրբեջանը, Եգիպտոսը, Սուդանը և Ինդոնեզիան: Արդյունքում՝ բանաձևում հիշատակվեց Կոսովոյի ժողովրդի հետ համերաշխության մասին: Ի դեպ, իսլամական հինգ երկրներ՝ Թուրքիան, Ալբանիան, Մալայզիան, Աֆղանստանը և Սենեգալը, պաշտոնապես ճանաչել են Կոսովոն:

## ***Հայաստանի պարագան***

Դաքարի գազաթաժողովում ընդունվեց նաև «Հայաստանի Հանրապետության ազդեցիկ Ադրբեջանի Հանրապետության դեմ» բանաձևը: ԻԿԿ-ն, որպես կանոն, խստորեն դատապարտեց Հայաստանի «ազդեցիկ» Ադրբեջանի դեմ, Ադրբեջանի քաղաքացիների նկատմամբ իրականացված գործողությունները որակվեցին որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: ԻԿԿ-ն դատապարտեց «ադրբեջանական գրավյալ տարածքներում» ճարտարապետական, մշակութային, կրոնական հուշարձանների ոչնչացման փաստը, պահանջեց, որպեսզի Հայաստանն առանց նախապայմանների և ամբողջապես դուրս բերի զորքերը «ադրբեջանական գրավյալ տարածքներից, ներառյալ Լեռնային Ղարաբաղից», ներդնի ՄԱԿ ԱԽ 822, 853, 874, 884 բանաձևերը, ճանաչի Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: ԻԿԿ-ն կոչ արեց անդամ պետություններին և միջազգային հանրության այլ անդամներին՝ Հայաստանի դեմ օգտագործել քաղաքական և տնտեսական միջոցներ Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ «ազդեցիկային» վերջ դնելու համար: Այս համատեքստում, ԻԿԿ-ն կոչ արեց իսլամական երկրներին՝ համերաշխ լինել Ադրբեջանի հետ: Նշենք, որ 1994-ից մինչ օրս հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ Իսլամական կոնֆերանսի հռետորականության մեջ գրեթե ոչինչ չի փոխվել: ԻԿԿ-ն, Լեռնային Ղարաբաղի հարցը համարելով հայ-ադրբեջանական հակամարտություն, խնդիրը դիտարկում է խիստ միակողմանի՝ հենվելով բացառապես իսլամական համերաշխության սկզբունքի վրա: Միննույն ժամանակ, ԻԿԿ-ն որևէ քայլ չի ձեռնարկել խնդրի կարգավորման ուղղությամբ: ԻԿԿ փաստական օգնությունն Ադրբեջանին ՄԱԿ-ում հոգուտ Ադրբեջանի իսլամական պետությունների քվեարկությունն է, ինչի ապացույցը մայիսի 14-ին ՄԱԿ ԳԱ-ի՝ Լեռնային Ղարաբաղի մասին ընդունած բանաձևն է: Ի դեպ, ՄԱԿ ԱԽ-ում Լեռնային Ղարաբաղի մասին բանաձևին դեմ են քվեարկել հետևյալ իսլամական և ոչ իսլամական երկրները՝ Աֆղանստան, Ադրբեջան, Բահրեյն, Բանգլադեշ, Բրունեյ, Կամբոջա, Կոլումբիա, Կոմորոս, Ջիբութի, Վրաստան, Ինդոնեզիա, Իրաք, Հորդանան, Քուվեյթ, Լիբիա, Մալայզիա, Մալդիվներ, Մոլդովա, Մարոկկո, Միանմար, Նիգեր, Նիգերիա, Օման, Պակիստան, Կատար, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Սերբիա, Սիերա Լեոնե, Սոմալի, Սուդան, Թուրքիա, Թուվալու, Ուգանդա, Ուկրաինա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ուզբեկստան, Եմեն: Բանաձևին դեմ

են քվեարկել Անգոլան, Հայաստանը, Ֆրանսիան, Հնդկաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Վանուատուն: Ձեռնպահ են մնացել 100 անդամ երկրներ:

Հատկանշական է, որ 2008թ. հունվարին տեղի ունեցած Իսլամական կոնֆերանս կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի կողմից նույնպես Հայաստանի վերաբերյալ նմանատիպ շեշտադրումներով բանաձև ընդունվեց:

### ***Իսլամաֆոբիայի հարցը***

Դաքարի հանդիպմանը քննարկվեց և համապատասխան բանաձևով վերստին ամրագրվեց 2006թ. Մեքքայի գագաթաժողովում հաստատված «Միացյալ իսլամական գործողության» տասը տարվա ծրագիրը, որն ուրվագծում է իսլամական գլոբալ և միջիսլամական համագործակցության ռազմավարությունը:

Առանձին ձևաչափով քննարկվեց իսլամաֆոբիայի հարցը, ինչն ԻԿԿ անդամ երկրների կարծիքով՝ վերջին շրջանում ակնհայտորեն սրվել է: Իսլամական հանրությանը մտահոգում է սեպտեմբերի 11-ից հետո հատկապես Եվրոպայում և Ամերիկայում իսլամի և իսլամական քաղաքակրթության նկատմամբ խորացող անհանդուրժողականությունը: Արդեն որերորդ անգամ ԻԿԿ-ն կոչ արեց Արևմուտքին՝ խիստ միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու իսլամաֆոբիայի դրսևորումները, քանի որ այն վտանգում է գլոբալ խաղաղությունն ու անվտանգությունը, կանխել իսլամական խորհրդանիշերի անարգումը: Նման մտահոգության պատճառը վերջերս դանիական մամուլում Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարների վերահրատարակումն էր և Նիդեռլանդներում իսլամի սուրբ գիրքը՝ Դուրանը քննադատող վավերագրական ֆիլմի նախապատրաստումը: Իսլամական աշխարհի առաջնորդները զգուշացրին, որ իսլամն անաբեկչության հետ նույնացնելը կարող է նպաստել մահմեդականների արմատականացմանը:

Չնայած իսլամական աշխարհին էապես անհանգստացնում են Արևմուտքի միջամտությունն իսլամական աշխարհի գործերին, ԱՄՆ հարաձուն ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքում, ԻԿԿ-ին այդպես էլ չի հաջողվում Արևմուտքի հետ հարաբերություններում որոշակի քաղաքականություն մշակել: Պատճառը, թերևս, այն է, որ այսօր իսլամական աշխարհը տարանջատված է ԱՄՆ կողմնակիցների և հակառակորդների միջև, ինչը որոշակիորեն խոչընդոտում է միասնականությանը:

### ***Իսլամական կոնֆերանսը՝ իսլամական համագործակցության երաշխավոր***

ԻԿԿ-ն հաճախ է քննադատվում սեփական որոշումները գործադրելու անկարողության մեջ: Նշվում է, որ ընդունված բանաձևերը, վճռական շեշտադրումներով հանդերձ, առավելապես հռչակագրային բնույթ ունեն: ԻԿԿ-ն մինչ օրս չի կարողացել հասնել իսլամական աշխարհի թերևս ամենակնճոռոտ խնդրի՝ պաղեստինյան և շատ այլ հարցերի կարգավորմանը, չնայած այն հանգամանքին, որ ԻԿԿ անդամ պետությունները (որոնք մոտ 1,5 մլրդ մահմեդական բնակչություն ունեն) տիրապետում են որոշակի ռեսուրսների: Մասնավորապես Ծոցի երկրները (ինչպես նշում են շատերն իսլամական աշխարհում) կարող են օգտագործել, ասենք, նավթային գործոնն Արևմուտքի հետ հարաբերություններում:

Այս իրողությունները, սակայն, չեն խանգարում, որպեսզի առաջիկայում նույնպես միջիսլամական հարաբերությունների առանցքը մնա էթնիկ, ռասայական և աշխարհագրական պատկանելությունը ժխտող հանրության՝ ումմայի (իսլամական ազգի) գաղափարը, իսկ իսլամը շարունակի հանդես գալ որպես իսլամական աշխարհի զարգացման ուղղություն, մահմեդական երկրների և ժողովուրդների միջև համագործակցության նախապայման: ԻԿԿ-ն ձգտում է ապացուցել, որ իսլամական աշխարհն անջրպետված չէ մնացյալ աշխարհից, իսկ մահմեդականներին առնչվող ամենասուր հակամարտություններն անգամ կոչ է անում լուծել խաղաղ ճանապարհով: Իսլամական աշխարհի գործիչները ցանկանում են, որպեսզի իսլամը 21-րդ դար մուտք գործի՝ զարկ տալով արդիականացմանը, հասարակական գիտակցության մեջ որոշակիորեն հաղթահարելով անհանդուրժողականությունն ու կրոնական մոլեռանդությունը: Բացի այս, ԻԿԿ-ն ձգտում է առավել ամրապնդել իսլամական համերաշխության սկզբունքը:

***Արաքս Փաշայան***  
***«Նորավանք» հիմնադրամ***

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՄՒՍԱՅԻՆ ԻՐԱՔՈՒՄ

1970թ. իրաքյան քրդերը Սադամ Հուսեյնի վարչակարգից «նվաճեցին» Քրդստանի ինքնավարության ճանաչմանը, սակայն Սադամի բռնած դիրքորոշման պատճառով այդ համաձայնագիրը կյանքի չկոչվեց, քանի որ Հուսեյնն անձամբ երբեք համակրանք չէր տաժում քրդերի նկատմամբ: Դրան հաջորդող ժամանակահատվածում նա «Ալ-Անֆալ» (ռազմավար) գործողության շրջանակներում գործնականում ցեղասպանության ենթարկեց քուրդ ժողովրդին: Տասնյակ հազարավոր քրդեր ֆիզիկապես ոչնչացվեցին, իսկ Քրդստանն «արաբականացվեց»: Իրադրությունը փոխվեց ԱՄՆ ղեկավարությամբ գործող միջազգային կռաւիցիոն ուժերով իրաքյան գորքերը Քուվեյթից վտարելուց մեկ տարի անց՝ 1992թ.: Բաղդադը կորցրեց վերահսկողությունը երկրի հյուսիսի նկատմամբ, արգելվեցին իրաքյան ռազմական ավիացիայի թռիչքները երկրի հյուսիսային շրջաններում: Ստեղծված «անվտանգության գոտու» շրջանակներում, փաստորեն, ամրապնդվեց Իրաքյան Քրդստանի ինքնավար կարգավիճակը, ինչը Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո նոր թափ հավաքեց: Իրականում այդ ինքնավարությունը ձեռք էր բերել անկախություն բոլոր հատկանիշներով՝ բացառությամբ դեյուրե ճանաչվելուց: 2005թ. հունվարին Իրաքյան Քրդստանում անցկացված հանրաքվեով քրդերի 98%-ը կողմ քվեարկեց լիակատար անկախությանը: Սակայն Իրաքյան Քրդստանի իշխանությունները զգուշացան հանրաքվեի արդյունքները կենսագործելուց՝ երկյուղելով տարածաշրջանային աղետներից: Սկսած 1992-ից՝ քրդական ինքնավարության պետհիմնարկներում արգելվել է Իրաքի պետական դրոշը: 2004թ. գարնանը Իրաքյան Քրդստան բերվեցին Շվեյցարիայում տպագրված քրդական դիմարները, սակայն ԱՄՆ-ը արգելեց քրդական նոր արժույթի կիրառումը<sup>1</sup>: Բացի այդ, քրդերը երկրի «Իրաքի Հանրապետություն» անվանումը փոխարինել են «Իրաքի Դաշնային Հանրապետություն» անվամբ, ինչն էլ արտացոլվել է քրդերի կողմից վերահսկվող տարածքների պաշտոնական փաստաթղթերում: Քրդերն ունեն նաև սեփական օրենսդիր և գործադիր իշխանություններ, պետական օրհներգ, բանակ: Այս ամենը նշանակում է, որ այսօր քրդերն իրենց չեն համարում միացյալ արաբական պետության՝ Իրաքի մի մասը:

Սադամ Հուսեյնի օրոք Բաղդադի ու Անկարայի միջև համաձայնություն էր ձեռք բերվել, ըստ որի՝ թուրքական ստորաբաժանումները կարող էին Իրաքի տարածքում «տաք հետքերով» հետապնդել քուրդ զինյալներին: Ընդ որում՝ իրաքցի զինվորականները հաճախ մոռանում էին այդ համաձայնության մասին՝ խանդավառությամբ չընդունելով սեփական տարածքում թուրք գործընկերների նմանօրինակ քայլերը:

Սադամ Հուսեյնը հարաբերական հաջողությամբ վերահսկում էր երկրի հյուսիսը և դաժանորեն ճնշում քրդերի ապստամբությունները: Սակայն նրա տապալումից հետո իրաքյան նոր խամաճիկային կառավարությունը փաստացիորեն կորցրեց վերահսկողությունը Քիրքուքի և Մոսուլի շրջանների նկատմամբ: Քրդերին հնարավորություն ընձեռվեց ստեղծել յուրահատուկ «պարտիզանական արգելավայր», որը դարձավ Թուրքիայի տարածքում գործող քրդերի հենակետը:

2003թ. իրենց դաշնակիցների հետ Իրաք մտան ամերիկացիները, և քրդական խնդիրը որոշակի տարածայնություններ առաջացրեց ՆԱՏՕ-ի միակ մահմեդական անդամ Թուրքիայի ու նրա մի շարք դաշնակիցների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի միջև: Թուրքական պետականությունը հիմնված է Քեմալ Աթաթուրքի գաղափարների վրա: Դրանց միջուկը կազմում է ազգային միասնությունը: Քեմալական գաղափարների պաշտպանության և ազգային պետության միաս-

<sup>1</sup> Հետաքրքիր է, որ Լեռնային Ղարաբաղը նույնպես ունի սեփական արժույթ, սակայն այնտեղ կիրառվում է միայն հայկական դրամը:

նության պահպանման համար թուրքերը պատրաստ են գնալ ամեն ինչի՝ ընդհուպ մինչև իրենց ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սրման: Դրա համար էլ իրաքյան պատերազմի ժամանակ Թուրքիան ամերիկացիներին չհատկացրեց իր տարածքը՝ լավ հասկանալով, թե այդ քայլն ինչ ազդեցություն կունենար քրդերի շրջանում:

Վաշինգտոնը, առանց լուրջ ջանքեր գործադրելու, ստացավ Իրաքը, սակայն շուտով հասկացավ, որ զավթելը քիչ է, անհրաժեշտ է զավթածը պահել: ԱՄՆ դաշնակիցները սկսեցին հեռանալ Իրաքից: Փորձագետները գտնում են, որ ներկայումս ԱՄՆ-ը ավելի շատ է կախված Թուրքիայից, քան Թուրքիան՝ ԱՄՆ-ից:

Իրաքի հյուսիսում ԱՄՆ-ը շեշտը դնում է քրդական համայնքի վրա, որը համարվում է իրաքյան սուննիների «բնական թշնամին»: Բացի այդ, քրդական համայնքը բարեկամական զգացումներ չի տածում նաև Իրաքի շիաների նկատմամբ:

Թուրքիան չէր կարող պարզապես դիտել, թե հարևան երկրում ինչպես է ծաղկում վաղեմի հակառակորդը, թե ինչպես են քրդական երկու գլխավոր կուսակցությունների՝ Քրդստանի Դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) և Քրդստանի Հայրենասիրական միության (ՔՀՄ) առաջնորդներ Մասուդ Բարզանին և Ջելալ Թալաբանին Իրաքում դարձել նախագահներ և ձևականորեն ղեկավարում են Իրաքի ողջ տարածքը, թե ինչպես է փոփոխվում Քիրքուքի ժողովրդագրական պատկերը<sup>1</sup>: Թուրքիան փակեց իր օդային տարածքը Եվրոպայից Իրաք թռչող ինքնաթիռների համար: Ողջ 2007թ. ընթացքում այդ երկիրը փորձում էր իր շահերին ծառայեցնել ամերիկյան՝ «Իրաքի Հանրապետության ազգային դեմոկրատական կառավարություն» անունը կրող ծրագիրը: Անկարան երկարատև բանակցություններ սկսեց Բաղդադի հետ. Բաղդադից պահանջվում էր իրեն տրամադրել Իրաքի տարածքում առանց սահմանափակումների իր հակառակորդներին հետապնդելու իրավունքը: Բաղդադն ընդդիմանում էր դրան: Ի վերջո, 2007թ. օգոստոսին Անկարայի ու Բաղդադի միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ Թուրքիան ու Իրաքը պայմանավորվում են ահաբեկչության և մասնավորապես քուրդ ապստամբների դեմ համատեղ պայքարել: Հիմնական կետերից մեկն այն էր, որ թուրքական բանակին թույլատրվում էր իրաքյան տարածքում հետապնդել 1974թ. ստեղծված Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) ապստամբներին, սակայն դա պետք է լիներ յուրաքանչյուր կոնկրետ պարագայում Բաղդադի պաշտոնական թույլտվությունից հետո: Համաձայնագիրը նաև նախատեսում էր, որ ՔԲԿ ղեկավարները, որոնց հենակետերը գտնվում են Քրդստանի իրաքյան հատվածում, կա՛մ փոխանցվեն Թուրքիային, կա՛մ Իրաքն ապահովի նրանց նկատմամբ դատական գործընթացը: Իրաքը նաև պարտավորվում էր փակել ՔԲԿ ֆինանսավորման աղբյուրները:

Համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը Թուրքիային կոչ արեց չներխուժել Իրաք՝ նշելով, որ դա ոչ մի լավ բանի չի հանգեցնի ո՛չ Թուրքիայի, ո՛չ էլ Իրաքի համար: Սպիտակ տունը համանման հայտարարությամբ հանդես է եկել նաև 2007թ. մայիսին, երբ Թուրքիան Իրաքի սահմաններում կենտրոնացրել էր մեխանիզացված ու տանկային ստորաբաժանումներ:

Ներկայումս քրդերի թվաքանակն Իրաքում հասնում է 7 մլն մարդու, որը կազմում է երկրի բնակչության 20%-ը, Թուրքիայում՝ համապատասխանաբար 16 մլն մարդ (40%), Իրանում՝ 11 մլն (23%), Սիրիայում՝ 1.5 մլն (4.5%):

---

<sup>1</sup> Քրդական քաղաք համարվող Քիրքուքը Մադամ Հուսեյնի կառավարման ժամանակ «արաբականացվեց», իսկ Իրաքյան Քրդստանի վարչական սահմանները հեռացվեցին: Այժմ քրդերը հետ են պահանջում այդ քաղաքը, սակայն քաղաքի արաբական բնակչությունն ընդդիմանում է դրան: 2007թ. դեկտեմբերին քաղաքի ճակատագիրը որոշելու համար այնտեղ պետք է հանրաքվե անցկացվեր, սակայն քաղաքական նկատառումներով այն հետաձգվեց 2008թ. հունիսին:

Թուրքիայում քրդերի պայքարի<sup>1</sup> հիմնական եղանակը հետևյալն է. խաղաղ բնակչության նկատմամբ ահաբեկչություն, ռազմական գործողություններ բանակի ու կարգուկանոն հաստատող ուժերի դեմ, սեփական դավաճանների վերացում, զբոսաշրջության գոտիներում ահաբեկչական գործողություններ: Վերջիններից ամենահայտնին իրանա-թուրքական գազամուղի պայթեցումն էր: Քրդերի այդ քայլը միաժամանակ հարված հասցրեց և՛ Թուրքիային, և՛ Իրանին: Դա հանգեցրեց նրան, որ Թուրքիան սկսեց բարելավել հարաբերություններն ավանդական հակառակորդի՝ Իրանի հետ, ինչի նկատմամբ ԱՄՆ արձագանքը միանշանակ չէր:

2007թ. հոկտեմբերի 12-ին թուրք-իրաքյան սահմանի մոտ ՔԲԿ զինյալները հարձակվեցին ու ոչնչացրին 12 թուրք զինվորների: Տասն օր անց՝ հոկտեմբերի 22-ին, հետևեց նոր հարձակում, ինչի արդյունքում սպանվեց 17 թուրք զինվոր ու անհետ կորավ 10-ը: Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը հայտարարեց, որ իրենց համբերության բաժակն արդեն լցվել է: Կարելի է կարծել, թե իր այս քայլերով ՔԲԿ-ը ինքն է թուրքական իշխանություններին հատուկ ներխուժման մղում:

2007թ. հոկտեմբերին Թուրքիայի խորհրդարանում հակաքրդական բանաձևի ընդունումից (507 կողմ, 19 դեմ) անմիջապես հետո Իրաքյան Քրդստանի «նախագահ» Մասուդ Բարզանին հայտարարեց, որ իրաքյան քրդերը չեն ցանկանում մասնակցել Թուրքիայի ու ՔԲԿ-ի միջև կոնֆլիկտին, և եթե թուրքերը որևիցե պատրվակով ներխուժեն Իրաքյան Քրդստան, ապա արժանի դիմադրության կհանդիպեն:

Ուշագրավ է, որ վերջին 3 տարում թուրք-ամերիկյան հարաբերություններն ամենավատ վիճակում են: Դրանց բարելավման նպատակով 2008թ. հունվարի 6-11-ը Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլն այցելեց ԱՄՆ, ուր հանդիպումներ ունեցավ ու բանակցություններ վարեց ամերիկյան բարձրագույն ղեկավարության հետ, այդ թվում նաև նախագահ Ջորջ Բուշ-կրտսերի, փոխնախագահ Չեյնիի, պետքարտուղար Ռայսի, պաշտպանության նախարար Գեյթսի հետ: Անկարայի ու Վաշինգտոնի ձեռնարկած նախկին բոլոր միջոցառումները, որոնք ուղղված էին թուրքական հասարակությունում հակաամերիկյան տրամադրությունների նվազմանը, ոչ մի արդյունք չէին տվել<sup>2</sup>: Գյուլի այցելության արդյունքում ամերիկյան դիրքորոշումը կտրուկ փոխվեց: Ամենայն հավանականությամբ, Գյուլը նշել է քուրդ ահաբեկիչների անվերջ ահաբեկությունների մասին, իսկ Բուշը, մանրամասնությունների մեջ չընկնելով, «կանաչ լույս» է վառել թուրքական ներխուժման համար: Սակայն կարելի է փաստել, որ Բուշի հետագա գործողությունները ցույց տվեցին, որ դրա հետևանքով նա «կրակն է ընկել»: Իրականում ԱՄՆ-ը շահագրգռված է տարածաշրջանում կայունության և նավթարդյունահանման ու նավթափոխադրման անվտանգության պահպանմամբ<sup>3</sup>:

2007թ. դեկտեմբերին թուրքական ռազմաօդային ուժերի մի շարք օդային հարձակումներից հետո, 2008թ. փետրվարի 21-ի գիշերը, թուրքական զինված ուժերը ՔԲԿ զինյալների դեմ ցամաքային ռազմական գործողություն ձեռնարկեցին: Ենթադրվում էր, որ Իրաքի տարածքում գտնվող ՔԲԿ զինյալների թվաքանակը հասնում է 3000-5000 մարդու: Գլխավոր շտաբի հաղորդման համաձայն՝ գործողությունը կարելի է հաջողված համարել, քանի որ ՔԲԿ-ին պատկանող քարանձավները, ապաստարանները, թեթև զենքերը և զենիթային հրետանին, ինչպես նաև փոխադրման ու ծառայության միջոցներն ամբողջությամբ ոչնչացվել են: Ընդհա-

<sup>1</sup> ՔԲԿ առաջնորդ Աբդուլահ Օջալանը տասնամյա հետապնդումից հետո՝ 1999թ., թուրքական իշխանությունների կողմից Քոնիայում ձերբակալվեց ու դատապարտվեց ցմահ բանտարկության՝ առանց ներման իրավունքի: Մինչ այդ քրդերը Թուրքիայում պայքարում էին անկախություն ձեռք բերելու համար, սակայն դրանից հետո հիմնականում պայքարում են իրենց մշակութային կարգավիճակի ճանաչման համար:

<sup>2</sup> Թուրքիայի բնակչության համարյա 80%-ը կարծում է, թե ազգային անվտանգության թիվ 1 սպառնալիքն ԱՄՆ-ն է: Ամերիկյան մամուլում հայտնված՝ ԱՄՆ-ի կողմից նախատեսվող նոր Մերձավոր Արևելքի քարտեզի վրա նշված էր Ազատ Քրդստան անունը կրող պետության մասին, որին պետք է անցնեն Թուրքիայի արևելյան 20 վիլայեթները:

<sup>3</sup> Միջին ու Մերձավոր Արևելքում է գտնվում ածխաջրածինների համաշխարհային պաշարների 2/3-ը: Հորմուզի նեղուցով է փոխադրվում նավթի համաշխարհային փոխադրման 20%-ը: ԱՄՆ-ը իր նավթային կարիքների կեսից ավելին բավարարում է ներկրման միջոցով:

նուր առմամբ, ոչնչացվել է 237 ահաբեկիչ: Թուրքական կողմը կորցրել է 27 զինծառայող: Մինչդեռ քրդական աղբյուրները նշում են, որ գործողությունն անհաջողության է մատնվել, և որ քրդերի կորուստները կազմում են 9 պարտիզան, իսկ թուրքերինը՝ 108 զինծառայող, ինչպես նաև «Կոբրա» տիպի 1 ուղղաթիռ: Թուրքական զորքերն Իրաքի տարածքում առաջ էին շարժվել 25կմ (այլ տվյալներով՝ 5-10կմ), իսկ թուրքական ավիացիան քրդերի տարբեր օբյեկտների հարվածներ էր հասցնում մինչև 40կմ խորությամբ: Կարելի է փաստել, որ այս վերջին գործողությունն առավել հաջող էր, քան 1990-ական թթ. Թուրքիայի ձեռնարկածները:

Ռազմական գործողության որոշակի հաջողությունը հնարավոր դարձավ միայն 2007թ. նոյեմբերի 5-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանի և ԱՄՆ նախագահ Բուշի հանդիպման շնորհիվ, որի հետևանքով թուրքական զինված ուժերն սկսեցին հետախուզական տվյալներ ստանալ ԿՀՎ իրենց գործընկերներից:

Ոչ միայն ԱՄՆ-ը, այլև Եվրամիությունը և նրա ինստիտուտներն այլ երկրների հետ ընդունեցին, որ Թուրքիան տարածքային ամբողջականության պահպանման համար օգտվում է իր օրինական իրավունքից: Միաժամանակ ռազմական գործողությունը որոշակի դաս հանդիսացավ Իրաքի կառավարության և քրդական ինքնավարության վարչակազմի համար՝ ցույց տալով, որ ՔԲԿ զինյալները չեն կարող ազատ գործել այդ տարածքում: Այսպիսով Անկարան ցանկանում է Իրաքի և հենց իր՝ Թուրքիայի քրդերին ցույց տալ թուրքական զենքի հզորությունը, որպեսզի նրանք ընդհանրապես չմտածեն անկախության մասին:

Թուրքական զինվորականներն իրաքյան կառավարությանը վստահեցրին, որ 1. իրենց գործնասերն անմիջապես կլքեն Իրաքի տարածքն այն ժամանակ, երբ կկատարեն իրենց առջև դրված առաջադրանքները, 2. իրենց նպատակը միայն ՔԲԿ ահաբեկիչներն են: Թուրքական գործնասերը սեփական երկրի սահմաններից դուրս չգտնվեցին երկար ժամանակով, ստորաբաժանումները չծավալվեցին մինչև Ղանդիլի լեռնաշղթան<sup>1</sup>, կամ սահմանների երկայնքով չստեղծվեց բուֆերային գոտի:

Մակայն և՛ ԱՄՆ-ը, և՛ ԵՄ-ը լրջորեն անհանգստացած էին, որ ռազմական գործողությունը երկարատև չլինի և բախումներ տեղի չունենան թուրքական բանակի ստորաբաժանումների ու քրդական «Փեշմերգա»<sup>2</sup> (մահապարտ) զինված գործադրումների միջև, քանի որ, ի տարբերություն ՔԲԿ-ի, «Փեշմերգայի» փորձառու, լավ զինված մարտիկների թիվը հասնում է մոտ 80.000-ի<sup>3</sup>:

Այսուհետև ՔԲԿ գործունեությունը մեծ մասամբ կախված կլինի իրաքյան կառավարության դիրքորոշումից և դե-ֆակտո Իրաքի հյուսիսում գտնվող քրդական վարչակազմի գործունեությունից: Եթե ուշադրության չարժանանա այն, որ Իրաքի հյուսիսում գտնվող քրդական վարչակազմը և նրա ղեկավար Մասուդ Բարզանին ԱՄՆ աչքում կորցնում են վստահությունը, Թուրքիան ստիպված կլինի ուշադիր լինել դրա նկատմամբ: Այստեղ արդեն կարևոր չէ, թե Թուրքիան որքանով է դժգոհ Բարզանիի գործունեությունից, քանի որ եթե ցանկանում է Իրաքի տարածքում չեզոքացնել ՔԲԿ գործունեությունը, ապա ստիպված կլինի հաշվի նստել նրա հետ:

Հյուսիսային Իրաքից ՔԲԿ «վտարումը» Թուրքիայի միակ նպատակը չէ: Իրականում թուրքական նոր ներխուժման պատճառն այն է, որ քրդերը դեմ չեն օգտվել Կոսովոյի օրինակից՝ իրենց դարավոր երազանքներն իրականացնելու համար: Բացի այդ, Թուրքիան ցանկանում է ՔԲԿ ահաբեկչական բնույթի վրա հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը:

<sup>1</sup> Լեռնաշղթան Թուրքիայի տարածքից Իրաքյան Քրդստանի միջով ձգվում է դեպի Իրան:

<sup>2</sup> 2005թ. հունիսին «Նյու Յորքերի» լրագրող Սեյմուր Հերշը հաղորդեց, որ Իսրայելի հատուկ ծառայությունները գաղտնի մարտական նախապատրաստություն են անցկացնում «Փեշմերգայի» ջոկատների շրջանում: Իսրայելը ցանկանում է ստեղծել քրդական ռազմական ուժ, որը կարող է դիմակայել Իրաքում շիական կազմավորումների աճող հզորությանը: Քրդերի հետ համագործակցության միջոցով Իսրայելն «աչքեր ու ականջներ» է ստանում՝ Իրանի, Իրաքի ու Սիրիայի նկատմամբ հսկողություն սահմանելու համար:

<sup>3</sup> Եթե «Փեշմերգան» մտցվի իրաքյան բանակի կազմի մեջ, ապա կշարունակի պահպանել անվանումը և կկազմի իրաքյան բանակի 33%-ը:

Հատկանշական է, որ քուրդ ժողովրդի սեփական անկախության համար մղվող պայքարը, ըստ էության, սկսվել է դեռևս 19-րդ դարում և շարունակվում է ներկայումս: Պայքարի գլխավոր օջախներն ավանդաբար գտնվել են Թուրքիայում և Իրաքում: Թուրքիայում կոնֆլիկտը սրվեց 1984թ.: 23 տարվա զինված պայքարի արդյունքում երկու կողմից զոհվել է 37.000 մարդ: Խնդրի կարգավորմանը խանգարում է այն հանգամանքը, որ Անկարան որդեգրել է այնպիսի դիրքորոշում, որ բացառում է ՔԲԿ-ի հետ երկխոսությունը: Միաժամանակ, քրդական հարցի կարգավորումը համարվում է Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու հեռանկարների քննարկման պայմաններից մեկը: Թուրքիան պետք է ապահովի քրդերի իրավունքներն ու ճանաչի քրդերեն լեզուն, այդ լեզվով բացի ռադիո և հեռուստատեսություն:

Իրաքի կառավարությունը բավական կոշտ արձագանքեց թուրքական ներխուժմանը: Ի պատասխան նրա հնչեցրած բողոքների՝ թուրք նախարարները հայտարարեցին, որ անցկացնում են հակաահաբեկչական գործողություն: Իրաքի արտաքին գործերի նախարար Ալ-Հաջեմ Մահմուդը հայտարարել է, որ թուրքական ներխուժումը երկրին մեծ վնաս է հասցրել, և որ թուրքական կողմը կիրառել է զրահատեխնիկա, ավիացիա և նույնիսկ տակտիկական հրթիռներ: Փորձագետ-տնտեսագետների տվյալներով՝ թուրքական ագրեսիայի հետևանքով ապակայունացվել են ֆինանսական շուկաները: Դա զարմանալի չէ, քանի որ ռազմական գործողություններն ընթանում էին անմիջապես նավթահանքերի ու նավթամուղների հարևանությամբ:

ԱՄՆ պաշտպանության նախարար Ռ.Գեյթսի Անկարա այցից 1 օր հետո՝ փետրվարի 28-ին, Թուրքիայի Գլխավոր շտաբը պաշտոնապես հայտարարեց Իրաքից իր զորքերի դուրսբերման մասին: Սկզբնական շրջանում ԱՄՆ-ը Իրաքի տարածքում թուրքական գործողության համար ճանապարհի հարթեց, սակայն հետագայում ԱՄՆ-ում որոշեցին, որ այն ձգձգվում է և կարող է վնասել սեփական շահերին: Ռ.Գեյթսը փետրվարի 26-ին հայտարարեց, որ թուրքական զինված ուժերի ռազմական գործողությունը պետք է տևի 2-3 շաբաթից ոչ ավելի, ոչ թե ամիսներ: Բացի այդ, նա նշեց, որ ՔԲԿ խնդիրը չի կարող լուծվել միայն ռազմական ճանապարհով. անհրաժեշտ են նաև տնտեսական ու քաղաքական նախաձեռնություններ: Այս մասին Գեյթսը հայտարարեց նաև փետրվարի 28-ին բարձրաստիճան թուրք զինվորականների հետ բանակցությունների ժամանակ: Սակայն սխալ կլինի կարծել, թե Անկարա ժամանելիս Գեյթսը պատկերացում ուներ այն մասին, որ Իրաքի հյուսիսում թուրքական զինված ուժերի ձեռնարկած ռազմական գործողությունը որքան կձգձգվի:

ԱՄՆ նախագահ Բուշը հաստատեց պաշտպանության նախարարի խոսքերը՝ հավելելով, որ թուրքերը պետք է արագ գործեն, հասնեն իրենց նպատակներին ու հեռանան Իրաքից: Ամերիկյան ճնշման արդյունքում թուրք քաղաքական գործիչները տեղի տվեցին և դադարեցրին ռազմական գործողությունը: Դրանից առաջ, սակայն, նրանք հայտարարում էին, որ դրա համար որոշակի ժամկետ գոյություն չունի, իրենց զորքերն Իրաքի հյուսիսային շրջաններից չեն հեռանա, քանի դեռ չի վերացվել քուրդ զինյալների վտանգի սպառնալիքը:

Հարկ է նշել, որ աշխարհի և ոչ մի երկիր հստակ կերպով չէր կարող հակաահաբեկչական գործողություններ իրականացնելու ճշգրիտ ժամկետներ նշել: Դրա պատճառն այն է, որ իրավիճակն անկանխատեսելիորեն է զարգանում. այսօր զինյալների բազաները գտնվում են մի վայրում, իսկ վաղը՝ մեկ այլ վայրում, զոհված զինյալներին փոխարինում են տասնյակ նոր մարտիկներ: Դրա համար էլ կարելի է անվերջ պատերազմել: Սեփական տարածքում ՔԲԿ գործառնավորումների վերացման ուղղությամբ Թուրքիայի պայքարը շարունակվում է արդեն 24 տարի, ընդ որում՝ որոշ ռազմական գործողությունների մասնակցել է մինչև 50.000 զինծառայող: Երաշխիք չկա, որ Անկարայի գործերը տվյալ ուղղությամբ օտար տարածքում առավել հաջող կընթանան: Այնուամենայնիվ, թուրքական զորքերի դուրսբերման որոշումը կայացվեց փետրվարի 29-ին, և 10 զենեքալների գլխավորությամբ գործող թուրքական 10.000-անոց էքսպեդիցիոն կորպուսը հեռացավ Իրաքի տարածքից: Կասկածից վեր է, որ Իրաքից թուրքական զորքերի հեռացումը քրդերը դիտում են որպես իրենց հաղթանակ:

Թուրքիայի ռազմական գերատեսչությունը հայտարարել է, որ ռազմական գործողության մասին որոշումներն Անկարան կայացրել է ինքնուրույն կերպ: Փաստորեն, այդ հայտարարությամբ Էրդոդանը հերքեց այն ենթադրությունը, ըստ որի՝ Անկարայի վճիռներում

հիմնական դերը խաղացել են Վաշինգտոնի տված ցուցումները: Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ, գեներալ Յաշար Բույուքանըթը նշել է, որ Իրաքի տարածքից թուրքական զորքերի դուրսբերումը կապված է այն բանի հետ, որ գործողությունը հասել է իր առջև դրված նպատակների իրագործմանը: Սակայն դա իրականում այդպես չէ, և նշված գործընթացները փոխկապակցված են: Ակնհայտ է, որ Թուրքիան չէր կարող երկար ժամանակ անտեսել Վաշինգտոնի համառ խորհուրդները: Ռազմական գործողությունը կարող էր շարունակվել այնքան ժամանակ, քանի դեռ չէր սկսել հակասել տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին:

Հետաքրքիր է, որ Անկարան մի կողմից՝ ընդունում և աջակցում է կոսովյան անջատողականներին, մյուս կողմից՝ Թուրքիայի հարավում և Իրաքի հյուսիսում կատաղի պայքար է մղում քուրդ անջատողականների դեմ: Դրանով Անկարան, փաստորեն, երկակի ստանդարտներ է կիրառում: Թուրքիան հիանալի կերպով օգտվում է Կոսովոյի շուրջ առաջացած աղմուկից, քանի որ գերտերությունների համար Կոսովոյի խնդիրն առավել հրատապ է, քան քրդական հարցը: Դա ևս մեկ անգամ հաստատում է Քոնդոլիզա Ռայսի այն հայտարարությունը, թե Կոսովոյի պարագայում համաշխարհային հասարակությունն ուղղեց 6 դար առաջ թույլ տրված անարդարությունը:

Օբյեկտիվորեն Թուրքիային կարելի է հասկանալ: Կասկածից վեր է, որ յուրաքանչյուր ահաբեկչական սպառնալիքի ու անջատողականության դեմ անհրաժեշտ է պայքարել: Եվ եթե Իրաքի կառավարությունը չի կարողանում վերահսկել իր հյուսիսային տարածքները, ինչն Իրաքի նախագահ Թալաբանին անձամբ ընդունում է, հարկ է լինում որոնել պայքարի նոր միջոցներ: Սակայն պայքարի թույլատրելի միջոցների մեջ էլ գոյություն ունի չափի սահման: Ռազմական գործողություն ձեռնարկելու փոխարեն Թուրքիան կարող էր փակել զինյալների ֆինանսավորման աղբյուրները, օգնություն ցուցաբերել Իրաքի օրինական կառավարությանը՝ երկրի հյուսիսային տարածքների վրա լիակատար վերահսկողություն սահմանելու համար, ուժեղացնել միջազգային վերահսկողությունը տարածաշրջանի իրավիճակի վրա: Մուվերեն պետության տարածք ներխուժելը միայն վերացնում է փոխըմբռնումը թուրքական ու իրաքյան կառավարությունների միջև, առաջացնում միջազգային հանրության անըմբռնողությունը և քրդական ժողովրդի զայրույթը: Այս ամենը մոտ հեռանկարում կարող է նպաստել տարածաշրջանում ահաբեկչական վտանգի աճին ու ապակայունացմանը:

Չնայած ԱՄՆ Պետդեպարտամենտի ցուցակում ՔԲԿ-ն ընդգրկված է ահաբեկչական կազմակերպությունների շարքում՝ ներկայումս քրդերն Իրաքում համարվում են ԱՄՆ միակ դաշնակիցը: Ժամանակին քրդերն աջակցություն ցուցաբերեցին ԱՄՆ-ին, որպեսզի տապալվի Սադամ Հուսեյնի վարչակարգը: Բացի այդ, քրդերն ապահովեցին ամերիկյան զորքերի անվտանգությունը Քրդստանում: 4 տարի շարունակվող պատերազմի պայմաններում Իրաքյան Քրդստանում չի զոհվել և ոչ մի ամերիկյան զինծառայող: Մինչդեռ Իրաքի կենտրոնական ու հարավային հատվածներում ամերիկյան զորքերը<sup>1</sup> մեծ դժվարություններ են կրում ահաբեկչական «Ալ-Կաիդա» խմբավորման իրաքյան մասնաճյուղի կողմից: Վերջինս ներկայումս անկում է ապրում. 2007թ. հունիսի դրությամբ նրա անդամների թիվը 12.000 է, մինչդեռ ներկայումս այդ թիվը 3500 է: Պատճառն այն է, որ «Ալ-Կաիդա» խմբավորման իրաքյան մասնաճյուղը խաղաղ բնակչության շրջանում բազմաթիվ ահաբեկչություններ է իրականացրել, ինչի պատճառով էլ խաղաղ բնակչությունը մեծաթիվ զոհեր է տվել: Այժմ ահաբեկիչները փոխել են իրենց մարտավարությունը և իրենց ուժերը կենտրոնացրել ամերիկյան զինծառայողների վրա<sup>2</sup>:

ՔԲԿ ջախջախումն ակնհայտորեն ձեռնառու չէ ԱՄՆ-ին, քանի որ քրդերը զսպում են «Ալ-Կաիդային» մոտ կանգնած իսլամական ահաբեկչական խմբավորումներին: Դրա համար էլ Իրաքյան Քրդստանը Իրաքի ամենահանգիստ հատվածն է: Բացի այդ, քրդերն ԱՄՆ-ի համար կարող են ծառայել որպես հարևան երկրների ներքաղաքական իրավիճակն ապակայունացնող գործիք: Խոսքը մասնավորապես, վերաբերում է Իրանին ու Սիրիային: ԱՄՆ-ը մտահոգված էր իրաքյան նավթի փոխադրմամբ, քանի որ ռազմական գործողությունները

<sup>1</sup> 2008թ. մարտի 1-ի դրությամբ ԱՄՆ-ը Իրաքում ունի 19 բրիգադ՝ մոտ 158.000 մարդ

<sup>2</sup> 2003թ. մարտից մինչև 2008թ. մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ զինված ուժերն Իրաքում տվել են 4224 սպանված և մոտ 29.350 վիրավոր: 4 ամերիկացի զինծառայող համարվում է անհետ կորած:



կարող էին խափանումներ առաջացնել: Մասնավորապես, դա վերաբերում է Քիրքուքի ու Ջեյհանի խողովակաշարերին<sup>1</sup>:

Ներկայումս Վաշինգտոնը քրդերի նկատմամբ երկակի քաղաքականություն է վարում. մի կողմից՝ աջակցում է Իրաքյան Քրդստանի անկախության գործընթացին, մյուս կողմից՝ չի շտապում ըստ էության լուծում տալ այդ խնդրին: Քրդստանի կառավարությունը մեղադրել է ԱՄՆ-ին Թուրքիայի առջև «կանաչ լույս» վառելու համար: Դրանով ԱՄՆ-ը, թերևս, ցանկանում է ստանալ Թուրքիայի աջակցությունն Իրանի հետ հետագա հակամարտության ժամանակ (Արևմուտքում թուրք-իրանական բախումը կանխատեսվում է 2010-ից ոչ ուշ):

Ամերիկացիներին մտահոգում են իրաքյան կառավարության այն փորձերը, որոնք ուղղված են տարածաշրջանային պետությունների, առաջին հերթին՝ Իրանի հետ կապերի ընդլայնմանը: Որպեսզի Իրաքին հետ պահեն այդպիսի «վտանգավոր կապերից», ինչպես նաև թուրքական քրդերին նախազգուշացնեն ակտիվություն չցուցաբերել Օջալանին ազատելու հարցում, ծրագրվեց նոր «դեմարշ»՝ թուրքական գործերի ներխուժումը Իրաք: Հետաքրքիր է, որ փետրվարյան թուրքական ներխուժմանը մասնակցել են նաև իսրայելցիները, որոնց համար Իրանը չարագործ է:

Իրաքյան Քրդստանում՝ Էրբիլում և Սուլեյմանիայում, արդեն բացվել են Իրանի գլխավոր հյուպատոսարանները: 2008թ. մարտի 2-ին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի այցն Իրաք շատերն արդեն որակել են որպես պատմական, քանի որ 1979-ից ի վեր Իրանի նախագահը չէր այցելել հարևան երկիր: Իրան-Իրաք հարաբերությունների ջերմացման համատեքստում թուրքական «դեմարշը» դեպի Թուրքիայի, Իրաքի ու Իրանի սահմանների հանգուցակետ լիովին կարելի է դիտարկել որպես Թեհրանին ուղղված նախազգուշացում: Դա համապատասխանել է ամերիկյան շահերին: Նախագահական ընտրությունների նախաշեմին Բուշը ցանկանում է ԱՄՆ-ում այդ կերպ բարձրացնել Հանրապետական կուսակցության հեղինակությունը:

Ինչ վերաբերում է թուրքական հասարակության վերաբերմունքին, ապա անհրաժեշտ է նշել, որ չնայած քաղաքական առումով շատ ցույցեր են տեղի ունենում Ստամբուլում, սակայն ռազմական գործողության դեմ բողոքները Թուրքիայում հազվադեպ երևույթ են: Դրա պատճառը իշխանությունների կողմից կիրառվելիք հնարավոր բռնությունների վախը չէ<sup>2</sup>: Հակառակական զանգվածային ելույթների բացակայության<sup>3</sup> գլխավոր պատճառը թուրքական հասարակությունում բանակի ունեցած համբավն է:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ թուրքերի մեծամասնությունը պաշտպանում է քրդերի դեմ ռազմական գործողության գաղափարը: Այս պարագայում կարելի է հավատալ պաշտոնական վիճակագրությանը: Միևնույն ժամանակ, թուրքական հասարակական կարծիքը վստահ է, որ բոլոր քրդերը, այդ թվում նաև քուրդ խորհրդարանականները, ինչ էլ որ ասեն, իրականում դեմ են պատերազմին: Քրդական քաղաքական գործիչները քննադատության չեն ենթարկել ռազմական օպերացիան, սակայն շարքային թուրքը կարծում է, որ իրականում նրանք թաքցնում են իրենց տեսակետը:

Միակ քաղաքական ուժը, որն ակնհայտորեն հանդես եկավ Հյուսիսային Իրաքում ռազմական գործողություն ձեռնարկելու դեմ, Թուրքիայում քրդական միակ լեզավ՝ Դեմոկրատական հասարակություն կուսակցությունն էր (ԴՀԿ): Սակայն պարզ է, որ ռազմական գործողության դադարեցումն ամեննին էլ կապված չէր ԴՀԿ-ի բողոքների հետ:

Թուրքիայում իրավիճակը փոխվեց ռազմական գործողությունը դադարեցնելուց հետո: Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) առաջնորդ Դենիզ Բայքալը քննադատության է ենթարկել երկրի իշխանություններին այն դադարեցնելու համար: Նա հայտարար-

<sup>1</sup> Իրաքը նավթի ու գազի պաշարներով աշխարհում զբաղեցնում է 3-րդ տեղը: Դրանց 40%-ը գտնվում է Քրդստանում:

<sup>2</sup> Ի վերջո, թուրք կոմունիստներն ամեն տարի մայիսի 1-ին հավաքվում են գլխավոր հրապարակներում ու խաղաղության մասին կոչեր հնչեցնում՝ քաջ զիտակցելով, որ ոստիկանները 100%-ով իրենց դեմ արցունքաբեր գազ են կիրառելու:

<sup>3</sup> Միայն քրդաբնակ Դիարբեքիր քաղաքում տեղի ունեցավ բազմահազարանոց ակցիա, որի ժամանակ քրդական երիտասարդությանը կոչ արվեց չձառայել թուրքական բանակում:

րել է, որ չի հավատում իշխանությունների պաշտոնական տեղեկատվությանը, թե թուրքական բանակն այլևս ի վիճակի չի եղել շարունակել գործողությունը: Բայցալը նաև նշել է, որ բանակը չի կատարել իր առջև դրված խնդիրները և Իրաքից դուրս է բերվել ԱՄՆ հրամանով: Նույն կերպ է վարվել ծայրահեղական Ազգային շարժում կուսակցության (ԱՇԿ) առաջնորդ Դևլեթ Բահչեյին:

Թուրքական մամուլով մի շարք հարցեր ուղղվեցին Գլխավոր շտաբի պետ Յաշար Բույուքանըթին. «Ո՞ւր է Ղանդիլը», «Ո՞ւր է ՔԲԿ խոստացված ոչնչացումը», «Ո՞ւր են Հայաստանի փախչող ՔԲԿ անդամները», «Ո՞ւմ հետ ենք պատերազմել», «Ինչպե՞ս են զոհվել մեր զինվորները»: Թուրքական մամուլը քննադատության է ենթարկել նաև ԱՄՆ-ին. «Նախ նա ասում է մտեք, մենք մտնում ենք, ասում է դուրս եկեք, դուրս ենք գալիս»: Դա նշանակում է, որ Թուրքիայում նորից ձախողվեցին այն փորձերը, որոնք ուղղված էին ազգաբնակչության շրջանում հակաամերիկյան տրամադրությունների մեղմմանը:

Այսպիսով, չպետք է հուսալ, որ թուրքական զորքերի ուժային գործողությունների հետևանքով քուրդ ժողովուրդը զենքը վայր կդնի ու կհանձնվի թուրքերի ողորմածությանը: Վերջին 15 տարիների ընթացքում թուրքերը մեկ անգամ չէ, որ փորձել են ծնկի բերել Իրաքում գտնվող քրդերին: Ամեն անգամ արդյունքը եղել է նույնը. թուրքական բանակը հպարտ կեցվածքով հեռացել է Իրաքից, իսկ ՔԲԿ զինյալները կարծես հրաշքով գոյատևել են: Թուրքական ներխուժումն ավելի է համախմբում քրդերին:

Հարկ է նշել, որ թուրքական հարվածն ուղղված է եղել Քրդական ինքնավար շրջանի գոյությանը, որն ավելի է մոտենում անկախությանը: Ակնհայտ է, որ Իրաքյան Քրդստանի անկախացումը զգալիորեն կարի իրավիճակը Թուրքական Քրդստանում, ուր տեղակայված է թուրքական բոլոր զինված ուժերի 80%-ը: Մինչ օրս թուրքերը կարողացել են վերահսկել նրա միայն աննշան մասը:

Չպետք է բացառել այն, որ թուրքերը հետագայում կարող են զավթել ամբողջ Հյուսիսային Իրաքը: Այս տարբերակը բավական մեծ հավանականություն ունի, քանի որ ամերիկացիների հեռանալուց հետո քրդերի անկախության հարցը նոր ընթացք կստանա, և քրդերը ոգևորված կշարունակեն իրենց պայքարը: Բացի այդ, Թուրքիան դրանով վերահսկողություն կսահմանի Քիրքուքի ու Մոսուլի շրջաններում գտնվող նավթահանքերի նկատմամբ, որոնց կարիքը սուր զգում է:

Քրդստանի խնդիրն այսօր համարվում է երկրագնդի «ամենատաք կետերից» մեկը: Սա պատմական նախադեպ է, որը կարող է լուրջ ազդեցություն ունենալ աշխարհի տարբեր անկյուններում քաղաքական գործիչների կողմից վճռվող ազգային-էթնիկական ինքնորոշման խնդիրների վրա: Քրդերը աշխարհի ամենախոշոր էթնոսն են, որին ցայժմ չի հաջողվել ստեղծել սեփական պետություն: Ամենայն հավանականությամբ, վաղ թե ուշ քրդերը կստեղծեն իրենց անկախ պետությունը:

*Հայկ Գաբրիելյան*

## 5 ЛЕТ ВОЙНЫ В ИРАКЕ. КОЛЛЕКЦИЯ ФАКТОВ<sup>1</sup>

20 марта 2003г. президент США Джордж Буш объявил о начале войны с Ираком. Решение о применении военной силы против Ирака поддержали 45 государств мира.

